

ՀԵՐԿՎԱԾ ԽՈՊԱՆ

ՊԻԵՍ ՉՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

ԸՆՍ Մ. ՇՈԼՈԽՈՎԻ ՀԱՄԱՍՈՒՆ ՎԵՐԻ

891.71
4 - 93

ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ - 1935

25 SEP 2006

4-93

ԱՐ

ՀԵՐԿՎԱԾ ԽՈՊԱՆ

ՊԻԵՍ ՉՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

ԸՆՏԱԿԱՆ ՇԱՄԱՆՈՒՆ ՎԵՐԻ

Կազմեց
Ն. Ա. ԿՐԱՇԵՆՆԻԿՈՎ,

Թարգմանեց
Ա. ՏԵՐ-ՀՈՎՆԱՆՅԱՑՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵՎԱՆ — 1935

24.05.2013

71893

455

Պատ. Խմբ. Ե. Զոփուրյան
Տել. Խմբ. Հ. Տեր-Դավթյան
Սրբագրիչ Մ. Գևորգյան

Գլամիլս 275 Պատվեր 4780
Հքաս., 3941 Տիրած 5000

Հանձնված ե արտադ. 5/X.
Ստորագրված ե ապելու^{19/X-35 թ. Առ. Ա.5-148x210.}
Տիպ. ան, Տաչկի 1902 թ, ԱԿՀՊՏ
Ռոտով ն Դոնու

Թայլատրված ե Ռեփերտուա-
րային հսկողության գլխա-
վոր վարչության կողմից կա-
տարման համար, Բ. լիմիտավ
ՀԱԽՀ տահմաններում. № 32
22 ոգոստ. 1935 թ. Յերեվան



3625-48

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Զ Ե Բ

ԴԱՎԻԴՈՎ ՍԵՄՅՈՆ – Պատիլովի գործարանի ըանվոր, փականագործ
Հազարական

ՆԱԳՈՒԽՆՈՎ – բջիջի քարտուղար, կարմրադրաշակիր
ՈԱԶՄՑՈՏՆՈՎ ԱՆԴՐԵՅ – գյուղխորհրդի նախագահ, կարմիր պարտիզան
ԼՅՈՒԽԻՇԿԻՆ ՊԱՎԵԼ
ՄԱՅԴԱՆՆԻԿՈՎ ԿՈՆԴՐԱՏ

ՊԱՊ ՇՅՈՒԿԱՐ

ՊՈԼՈՎՑԵՎ – նախկին յեսառու
ՈՍՏՐՈՎՆՈՎ ՅԱԿՈՎ ԼՈՒԿԻՉ

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ

ԲԱՆՆԻԿ ԳՐԻԳՈՐԻ

ԱԽՎԱՏԿԻՆ ԿՈՒԶՄԱ

ԼՈՒՇԿԱ – նագուլնովի կենը
ԿԱՏԵՐԻՆԱ – Ոստրովնովի մայրը

ՆԱՍՏԵՆԿԱ

ԱՆԻՍՅԱ – Լյուբիշկինի կենը
ՄՈԼՉՈՒՆ ԴԵՄԻԴ

ԽՈՎՐՈՎ ՆԻԿԻՏԱ

ՇԱԼԻ ԻԳՈԼԻՏ

ԴԱՄԱՍԿՈՎ ՖՐՈԼ
ՏԻՄՈՖԵՅՅ – նրա վորդին
ԲՈՐՈԴԻՆ ՏԻՏ

ԿՈՐՉԺԻՆՈԿԻ – շրջկոմի քարտուղար

ՔԱԼԱԲԱՆԻՆ – միլիցիայի պետ
ՍՈՄՈՒԻՆ – շրջանային վ.չ նախագահ

ԿԱԶԱԿԻՆԵՐ – Յարսկ խուտորից
ԿԱԶԱԿԻՆԵՐ ՅԵՎ ԿԱԶԱԿՈՒՀԻՆԵՐ – Քրեմյացի լողիք

Բեմադրությունը հեշտացնելու համար մեկ գերակտուարը կարող է խօսդու
յերկու կամ մի քանի գեր, որինակ, կորչժինսկու, Բալաբանի, Սամոլինի գե-
րերը կարող են խաղալ Գամասկով Ֆըռլը, Տիմոֆեյը, Խոպրովը և այլն:
Մեկ կամ մի քանի պատկերում չզբաղվածները կարող են խաղալ կազակ-
ների գերեր, վորպես գյուղացիներ:

Մի քանի գերակատար կարելի յե դուրս զցել, նրանց գերերը միացնելով
այլ գերակատարների, ինչպես Շալի Իպոլիտի գերը կարելի յե դուրս զցել,
տեքստը հանձնելով Լյութիշկին:

Մի քանի գերակատարների կարելի յե ամբողջովին դուրս զցել, ինչպես
Անիսիայի, Մոլունի գերերը և այլն:

ԱՐԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Ստանիցայի փողոցի մի ճամբ: Ոստրովսովի Խոճիթի պատշաճամբը: Դյուզ-
յուրինդի շենքի մուտքը: Ցեսեի պլանում՝ ցանկորմ, վորի յետե մի ծառ կա:
Խոյում ե զանգակների զողանչ: Բեմ են դուրագալիս Ա Յ ի ս յ ա ն
Լ ո ւ շ կ ա ն, Ն ա ս տ ե ն կ ա ն յ ի յ երկու աղջիկ:

ՆԱՍՏԵՆԿԱ. Եղ սվ ա եղ եկողը:

ԱՆԻՍՅԱ. Պալառյավոր ա: Ինքն ել կարճաբոյ:

ԼՈՒԺԿԱ. Բոյը կարճ ա, համա լինքով ա: Մտիկ առւ, վեզ
կասես բուղայի վիզ ընի:

ՆԱՍՏԵՆԿԱ. Լեն թիկունք ա: Եղ տեսակը լավ կիմանա գըկեր
աղջկերք:

Գալիս են Շ չ ո ւ կ ա ք պապը, Լ յ ո ւ բ ի շ կ ի ն ք, Բ ա ն ն ի կ ը,
Ա տ ա մ ա ն չ ո ւ կ ը, Մ ա յ գ ա ն ն ի կ ո վ ք:

ՇԶՈՒԲԻԿԱ. Արձակում ա... Ինքն իրա ձեռքով արձակում ա
ձին...

ԼՅՈՒԲԻՇԿԻՆ. Կլինի վոր շրջգործկոմի իշխանավոր և պորտ-
ֆելով, զյուղխորհուրդ ե եկել... Ոգնում ե կառապանին:
ԲԱՆՆԻԿ. Զին վարժ ձեռքով արձակեց... Հանեց... Ցերեռում ե,
իմացող մարդ ե:

ՇԶՈՒԲԻԿԱ. Տես, քացի կտա, ընկեր...

Գալիս են Դ ա վ ի դ ո վ ք, մյուս կողմից՝ Ռ ա զ մ յ ա տ ն ն վ ք
յիկ Ն ա ս գ ո ւ լ ն ն վ ք:

ԴԱՎԻԴՈՎ. Յես, հայրիկ, պուլեմյոտչիկ եմ յեղել. շատ ավելի կատաղի ձիկը եմ տեսել:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Իսկ ատամդ չկա, չնի՞ ձին ե քացի տվել: Կազակները ծիծառում են բարեփրու:

ԴԱՎԻԴՈՎ. Վոչ, ատամիցս զրկվել եմ քեֆի պատճառով: Ասենք այսպիս ավելի լավ ե, կանայք չեն վախենա, թե կկծմբ Ձեր բջիջի քարտուղարն ով ե:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Բջիջի քարտուղարը յես եմ: Իսկ դուք ով եք: **ԴԱՎԻԴՈՎ.** (Տալիս ե փաստարդերը) Շըշկոմի լիազորը:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Իսկ սա գյուղխորհրդի նախագահ Անդրեյ Ռազմունովն ե:

Դադար:

ԴԱՎԻԴՈՎ. Ինչո՞ւ յեք այդպես նայում ինձ:

ՇԶՈՒԿԱՐ. Հետաքրքրությունից, ընկեր: Ժողովուրդը հետաքրքրում ա, թե ինչ պատճառով եք մեզ մոտ եկել: Թե վոր, ասենք, հացամթերման...

ԴԱՎԻԴՈՎ. Կոլտնտեսության:

Կազակները միմանց են նայում, մեկը սուլում ե, յեվ դանդաղ ցրված են:

ՄԱՅԻՍՆԵԿՈՎ. Ժողովուրդը կասկածամում ե կոլտնտեսության մասին:

Բոլորը կամաց-կամաց ցրկում են:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Կազակները կամավոր ժողովուրդ են: Նրանց հարկավոր ե կոտրել:

Ինմի յետել լսված ե հարմոշկայի նվազ յել յերգ:

ԴԱՎԻԴՈՎ. Լի որն այդ ով ե ձեզանում քեֆ անում:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Կուլակների լակոտները:

ՌԱԶՄՑՑՈՏՆՈՎ. Տիմոշկան ե, կուլակ Ֆրու Ովանոյի տղան: Կնանիքի ձեռքից դադար չունեն: Դե, գնացինք...

Բոլորը գնաւմ են: Նրանց գնաւուց հետո բեմով անցնում են Տիմոֆեյը յեվ աղջիկներ, վորանցից հետո յերեվում ե Պուռակելը, վարը մատենում ե աջ կողմի դռանն ու ծեծռաւ:

ՊՈՂՈՎՃԵՎ. Յակով Լուկիչ, թույլ տուր գիշերելու:

Դոնից դուրս ե նայում Ոստրոննովը, ձեռքին լապտեր:

ՊՈՂՈՎՃԵՎ. Զես ճանաչում:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Վոչ, թանկագին ընկեր, չեմ ճանաչում: Շըշկուրծից չեք:

ՊՈՂՈՎՃԵՎ. Յակով Լուկիչ...

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Կասես ճանաչս դալիս ես: Ձեր ձայնն ասես ծանոթ ե:

ՊՈՂՈՎՃԵՎ. Պողովցեին հիշմամ ես:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. (Վախեցած չորս կողմն ե նայում) Զերդ բարեծնություն, պարոն յեսառու... Քանի՞ տարի յե անցել: Գնանք իրածիթ: (Ներս են մտնում):

ՅԵՐԿՐՈՐԴ ՊՈՏԿԵՐ

Ոստրովնովի խրճիթը: Հարուստ կահավորություն:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Ինչ անսպասելի բան, պարոն յեսառու... Ինչպես անվանել ձեզ այժմ, չգիտեմ: Հին ձեռվ—յետ եմ վարժվել, և մի տեսակ անհարմար ե:

ՊՈՂՈՎՃԵՎ. Կանչիր անուն հայրանունով: Զես մոռացել:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Ինչպես կարելի յե մոռանալ հրամանատարին: Ամբողջ գերմանական ճակատը միասին ենք վոտնատակ տվել, այս մյուսին ել հարկադրված յեղանք... Յես ձեզ շատ եմ հիշել: Ալեքսանդր Անխիմիչ: Այն ժամանակից, յերբ Նովորոսիյսկի տակ բաժանվելուց հետո ձեր մասին վոչ մի լուր չունեյինք այլս: Յես կարծում եյի, վոր դուք կազակների հետ անցել եք Տաճկաստան:

Սենյակ ե գալիս պառակ Կատերի հետան Ոստրովնովի մայրը: Նրա յերեվալուն պես Պուռակելը լուս ե:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. (Մորը) Հաց գցի:

Պառազի սկսում ե սեղան պատրաստի:

ՊՈՂՈՎՃԵՎ. Զիս թողել եմ ձորում:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. (Ետապում ե) Անմիջապես կրերեմ գոյս, առաջը դարի կցնեմ, ձերդ բարեծնություն Ալեքսանդր Անխիմիչ: (Գնում ե): ԿԱԾԵՐԻՆԱ. (Ընթրիք ե պատրաստում) Դուք վոր կողմերից եք:

ՊՈՂՈՎՃԵՎ. Յես... (Քմծիծաղում ե) Զճանաչեցիր, տատի:

Հեռու կողմերից եմ գալիս:

Գալիս ե Ոստրովնովը, նատեսնում ե հյուրին, հյուրախրանքը բռնում ե: Պառակը դուրս ե գնաւմ:

ՊՈՂՈՎՃԵՎ. Դե այժմ խոսենք:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Խոսելու բնչ կա, Ալեքսանդր Անխիմիչ: Կյանքն այնպես ե, վոր ամեներին չի ուրախացնում, չի գրավում... Կա-

զակներն սկսել եյին իրենց տնտեսությունը կարգի բերել սկսել եյին հարստանալ: 26-ին և 27-ին հարկերը, կարելի յե ասել, տանելի եյին: Իսկ այժմ հակառակն ե: Զեր ստանիցայում ինչպես ե: Կոլտնտեսության մասին խոսք կա, թե չկա:

ՊՈԼՈՎՃԵՎ. Կա:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Նշանակում ե այդ յերգից ամեն տեղ ել արցունք ե թափում: Ա՛յ, իմ մասին կասեմ: 20 թվին վերադարձանահնջից: Յերկու զույգ ձիս և ամրող ունեցածս մնաց Սև ծովի մոտ: Վերադարձանատարի խրճիթը: Այդ որվանից աշխատել եմ որ ու գիշեր: Ընկերներն առաջին անգամ պարենարկով նեղացրին, ցորենը մինչև վերջին հատիկը վերցրին: Իսկ այնուհետեւ վիրափորանքների հաշիվը կորավից: Շատ անգամ ընկերներն իմ կաշին մաշկեցին, բայց յես ամեն անգամ նորից մորթավորվեցի: Յես և սերմն եյի ախտահանում, և ձյունն եյի կուտակում իմ արտերում: Գարնանացանը միշտ աշնանը վարած հողի մեջ եյի ցանում, առանց գարնանավարի: Իմ ցելը միշտ առաջինն ե յեղել: Մի խոսքով, դարձա կուլտուրական հողագործ և այդ մասին (ցույց ե տալիս ըջանակում կարսկած զմռուել կնիքով թերքը) շրջանային Հոգրաժնից գովասանագիր ունեմ:

ՊՈԼՈՎՃԵՎ. Ճարպիկ մարդ ես, Յակով Լուկիչ: Զեղանում գրնամ են կոլտնտեսության մեջ:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Կոլտնտեսության: Առայժմ չեն ստիպում: Իսկ վաղը չքափորների ժողով ելինելու. մութն ընկնելուց առաջ անետուն ընկած իմաց եյին տալիս: Շրջանից իրիկունը ինչ վոր բանվոր ե յեկել մարդկանց կոլխոզ քշելու: Ե՛, դուք ինչպես եք ապրում, ծառայում եք, թե արհեստով եք զբաղվում:

ՊՈԼՈՎՃԵՎ. Այն ժամանակ նովորոսիյսկում յես մերոնց հետ չկնացի: Զհաջողվեց, մեզ գավաճանեցին կամավորներն ու դաշնակիցները: Մտա Կարմիր բանակ, եսկադրոնի հրամանատար եյի լեհական ճակատ գնալիս: Այնտեղ զտող հանձնաժողովը ինձ պաշտոնից հեռացըեց, ձերբակալեց և ուզարկեց Ռետրիբունար: Մի շան վորդի կազակ մատնել եր, վոր յես մասնակցել եմ Պողտելկովի մահապատժին... Տրիբունալ տանելու ճանապարհին փախա: Յերկար ժամանակ թագնվում եյի ուրիշի անունով, իսկ 23 թվին վերադարձա մեր ստանիցան: Այն փաստաթուղթը, վոր յես մի ժամանակ Կարմիր եսկադրոնի հրամանատար եյի յեղել, կարողացել եյի թագցնել: Լավ տղերք եյին: Մի խոսքով, այժմ գնում եմ Ուստ Խոպերսկ գործերով, ճանապարհին մտածեցի այ-

ցելել քեզ, վորպես հին ծառայակցի: Զե վոր դու իմ հարյուրակումն եյիր, Յակով Լուկիչ... իսկ հիշում ես յերբեմն... (Կամականին կումն եյիր, Յակով Լուկիչ... իսկ հիշում ես յերբեմն... Ուստ Խոպերսկ այլակցում ե ներան)

«Կազակները խմբովին
Դեպի տուն են շատապում,
Ուսագիրներ ուսերին,
Ցեվ խաչերը կրծքերին»:

Յերգելու ժամանակ Ոստր ով նով նշանացի ցույց ե տալիս, վար գետմ ե գուոր փակելու քանակի յեվ անմիջապես վերադառնում ե:

ՊՈԼՈՎՃԵՎ. «Գալիս են՝ ճամբին

Ծնողն և կանգնած.
Բարեկ, հայր իմ սիրելիք...»

ՈՕՏՐՈՎՆՈՎ. «Բարեկ, վորդիս սիրասուն»...

Յերկուսով

«Բորբոքվեց սիրուը
Կազակի սրառում,
Թռագ զլուխը
Դավաճան կնոշչ...»

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Այս Թռագ դումիւը: (Չեռքի բափ տալով) Կարելի յե ասեմ, բոլորը թռագ:

Պաղաք: Պոյալցելը նայում ե Ոստր ով նով ի ն:

ՊՈԼՈՎՃԵՎ. Իսկ հիշում ես, Լուկիչ, նահանջի ժամանակ նովորոսիյսկում ինչ ասացի յես կազակներին խորհրդային իշխանության մասին... Յես գեռ այն ժամանակ զգուշացրի, վոր «Կոմունիստները հուպ կտան ձեզ, հոգիներդ կհանեն»... Ինչպես ե, իմ ասածը գուրս չեկմիվ:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Դուք կարգացած մարդ եք, Ալեքսանդր Անիսիմիչ, գրքերից հասկանում եք, ասացեք, ինչ ե լինելու հետո: Կոլխոզները մեզ ուր են հասցնելու:

ՊՈԼՈՎՃԵՎ. Կոմունիստի, յեղբայր, խակական կոմունիզմի: Առաջ կլինի կոլտնտեսություն, հետո՝ կոմունա, սեփականության կտարյալ վոչնչացում: Քո հողի կողքին դու ճորտ կլինես:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Իսկ յեթե յես չեմ ուզում:

ՊՈԼՈՎՃԵՎ. Քեզ չեն ել հարցնի:

ՈՕՏՐՈՎՆՈՎ. Ինչպես թե չեն հարցնի:

ՊՈԼՈՎՃԵՎ. Այնպես:

ՈՕՏՐՈՎՆՈՎ. Լավ:

ՊՈԼՈՎՃԵՎ. Ինարկեն: Հիմի յես քեզ եմ հարցնում, կարելի՞ յե այսպիս այսպիս ապրել:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Անհարին ե:

ՊՈԼՈՎՃԵՎ. Իսկ յեթե անհարին ե, հարկավոր ե գործել, հարկավոր ե պայքարել:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Ի՞նչ եք ասում, Ալեքսանդր Անիսիմիչ: Փորձեցինք, պայքարեցինք: Անկարելի յե: Նույնիսկ մտածել չեմ կառող այդ մասին:

ՊՈԼՈՎՃԵՎ. Նորից փորձիր: (Մոտենում ե խոսակցին, նայում ե ամուռ փակված դռան կողմը) Յես քեզ ուղղակի կասեմ, մեր ստանիցայում կազակները պատրաստվում են ապստամբվել: Յեթե մենք լավ կազմակերպվենք և այժմ հանդես գանք, ապա գարնաը, ոտար պետությունների ոգնությամբ, Դոնը արդեն մաքրված կլինի: Մեր շրջանում մենք շատ համակրողներ ունենք, նրանց հարկավոր ե համախմբել, հավաքել: Հենց այդ գործով ել յես Ուստի Խոպերսկ եմ գնում: Կմիանամս մեզ:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Թույլ տվեք մտածեմ, պարոն յեսառու: Միանգամից մի ստիպեք: Վտանգավոր գործի յենք գնում:

ՊՈԼՈՎՃԵՎ. Մենք կոլխոզ չենք կանչում և վոչ վոքի չենք հարկագրում: Բո կամքն ե, բայց լեզուդ... (Հանում ե նազանը) Նայիր, Լուկիչ, վեցը քեզ, իսկ յոթերորդն ինձ:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Լեզվիս համար կարող եք միամիտ լինել: Բայց ձեր գործը վտանգավոր գործ ե: Չեմ թագնում, սարսափելի յե այդպիսի գործի գնալը: Բայց և կյանք ել չկա: Յեթե հարուստներին չճնշեյին, գուցե յես իմ աշխատանքով գյուղում առաջին մարդը լինելի: Ազատ կյանք յեթե լիներ, յես գուցե այժմ ավատոմորիլ կունենայի: Բայց և այնպես միայնակ գնալ այնպիսի գործի... Անմիջապես կսեղմեն: Իսկ ժողովուրդը կհետևի:

ՊՈԼՈՎՃԵՎ. Ժողովուրդը վոչսարի հոտ ե, նրան հարկավոր ե առաջնորդել: Ուրեմն ինչպես, վորոշում ես:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Ուրիշ յելք չկա, այդ պատճառով ել վորոշում եմ: Բայց և այնպես թողեք մի քիչ ծանր ու թեթև անեմ:

ՊՈԼՈՎՃԵՎ. Լսիր: Նախ և առաջ դու պետք ե մտնես կոլխոզ: Կազմակերպիր վստահելի կազակներին: Գտիր այնպիսիներին, վորոնք ատամ սրած լինեն խորհրդային իշխանության դեմ:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Այստեսակ կյանքից բոլորն ել ատամ են սրել: ՊոլովՃԵՎ. Իսկ տղադ ինչպես ե:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Մատը ձեռքից մու կարող ե փախչել, — ուր յես, այնտեղ ել նա:

ՊՈԼՈՎՃԵՎ. Ինչպես ե, ամուր տղա յե:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Լսկ կազակ ե: (Գալիս ե Կատերինան) Հյուրի համար անկողին պատրաստեցիր: Համեցեք, Ալեքսանդր Անիսիմիչ: ՊոլովՃԵՎ. Կարդա և ստորագրիր: (Տալիս ե մի քուղը յեվ անցնում կից սենյակը):

ՈՍՏՐՈՎՆՈՎ. (Կարդում ե) «Մեզ հետ ե աստված: Յես, Դոնի մեծ գորքի կազակս, մտնում եմ հայրենի Դոնի ազատազրման միության մեջ, պարտավորվում եմ իմ պետերի հրամանով մինչեւ արյանս վերջին կաթիլը բոլոր ուժերով և միջոցներով կրվել կումունիստների, բայց նիկների՝ քրիստոնեական հավասար յերդվյալ թշնամիների և ոռւս ժողովրդի հարստահարիչների դեմ: Պարտավորվում եմ իմ վողջ կայքս և կյանքս զոհաբերել փառապանծ հայրենիքի սեղանին»: Որհնեցեք, մայրիկ: (Ծունկ ե չօբում):

ԿԱՏԵՐԻՆԱՆ. Գնա, գնա նրանց գեմ, զավակս: Աստված կորհնիքեց: Յեկեղեցիները փակում են, տերտերներին հալածում են: Գնա:

ՅԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Գյուղխորհուրդ

Զքավորների ակտիվի ժաղավար: Բեմի վրա յեն Դավիդովը, Ռազմական տնօվակը, Նազարետի առաջնորդը, Մուշտակը, Ալուստի առաջնորդը, Ալուստի առաջնորդը, Ալուստի առաջնորդը, Ալուստի առաջնորդը, Ալուստի առաջնորդը:

ԴԱՎԻԴՈՎ. (Շարունակում ե խոսքը) Իսկ ինչու կոլտնտեսություն: Վորովհետեւ այսպես ապրել այլիս հարապոր չե: Կուշալինելու համար հարկավոր ե շատ ցանել: Միայն տրակտորը կարող ե ոգնել: Փաստ ե: Մի գութանով, որինակ, աշնանը ինչքան կարելի յե վարել:

ՇԶՈՒԿԱՆԻՐ. Մի գութանով: Աշնանավմբ: Յեթե մարդ լուսաբացից լուսաբաց աշխատի, մինչեւ ձմեռ տասներկու գեսյատին կլնի վոր վարի:

Ընդհանուր ադմուլ:

ԱՆԻՍՅԱՆ. Ի՞նչ ես ասում: Գութանին հարկավոր ա իրեք, հայ չորս ջուխտ յեղ լծել, մենք եղքան յեզ վորտեղից ունենք: Հարուստները կարող են, նրանց համար ամեն բան հնարավոր ա: Ազմուլ:

ՇԶՈՒԿԱՆԻՐ. (Մոտ ե գնում Գալիդովին) Իսկ տրակտորով ինչքան կարելի յե:

ԴԱՎԻԴՈՎ. Իսկ տրակտորով այդ տասներկու գեսյատինը կաբելի յե վարել՝ յերկու հերթի աշխատելիս մեկ որում:
Զարմացական բացականություններ:

ԼՅՈՒԲԻՇԿԻՆ. Ա՞յ, ինչ իմ ասել: Եդ տեսակ ձիով մարդ վար անի:
Աղմակ: Էթիանուր շարժում:

ՆԱԳՈՒԼՈՎ. (Չեռքով ծեծում ե օեղանը) Ընկերներ, լսեք:

ԴԱՎԻԴՈՎ. Նշանակում ե ի՞նչ ենք անում: Կուսակցությունը դրա համար նախատեսել ե համատարած կոլեկտիվացում անցկացնել վորպեսզի տրակտորը լծի ու ձեզ գուրս քաշի ձեր չքավորությունից: Ընկեր Լենինը մահից աւաշջ ի՞նչ ե ասել: Ասել ե՝ «Աշխատավոր գյուղացիության փրկությունը միայն կոլտնտեսության մեջ ե», այլապես նրա բանը բուրդ ե:

ԼՅՈՒԲԻՇԿԻՆ. Խելոք, ի՞նչ ես մեզ խորհրդային իշխանության համար քարոզ կարդում: Խորհրդային իշխանությունը մենք ի՞նքներս ենք պատերազմում հաստատել, ինքներս ել մեր ուսերը դեմ ենք տվել, վոր անսասան մնա: Հաստատելը հաստատեցինք, բայց հետո ի՞նչ: Ե՞լի հինը, Ե՞լի գութանը: Մարդ կա, վոր գութանին լծելու բան ունի, բայց մարդ կա, վոր վոչինչ չունի: Չե, դու մեքենա տուր մեզ, են մեքենան, վորի մասին ասում ես:

ՆԱԳՈՒԼՈՎ. Կարճ ասա:

ԼՅՈՒԲԻՇԿԻՆ. Մակար, գու ինձ մի խանգարի, յես տարենը մի անգամ եմ խոսում, ինձ կարելի յե:

ԴԱՎԻԴՈՎ. Շարունակիր:

ԼՅՈՒԲԻՇԿԻՆ. Ցես ցորենը հանձնել եմ, Ռազմյուտնով:

ՌԱԶՄՅՈՒՏՆՈՎ. Հանձնել ես, ի՞նչ ես զալմաղալ անում:

ԼՅՈՒԲԻՇԿԻՆ. Չե, զալմաղալ եմ անելու: Իսկ կուլակ ֆրու Ռվանոյը հանձնել ե: Չի հանձնել...

ՌԱԶՄՅՈՒՏՆՈՎ. Դրա համար ել զատարանը նրան տուգանեց և ցորենը վեցրինք:

ԼՅՈՒԲԻՇԿԻՆ. Իսկ նա այս տարի նորից նույն ֆրու Ռվանոյը կդառնա: Գարնանը նորից կզա ինձ վարձելու: Ի՞նչ եք ինձ կոլխոզի մասին ասում: Դուք առաջ կուլակի յերակները կտրեցեք: Մեզ տվեք նրա մեքենաները, նրա յեզները, նրա ուժը տվեք մեզ, այն ժամանակ հավասարություն կլինի:

ԴԱՎԻԴՈՎ. Իսկ դու ինչու յես բաց գուռը ծեծում: Չե վոր մեր կուսակցության քաղաքականությունն ել հենց զա յե՝ վոչնշացնել կուլակին վորպես դասակարգ, իսկ նրա կարողությունը տալ կոլխոզներին: Մեքենաների համար ես լաց լինում, այսինչ

հինգ հարյուր միլիոն մանեթ տալիս են կոլխոզներին մեքենաներ ձեռք բերելու համար, դու այդ մասին լսել ես: (Խրախուսական աղմուկ) Ուրեմն այլևս լինչ ես զալմաղալ բարձրացնում: Առաջ հարկագոր ե կոլխոզը ծնել, իսկ հետո արդեն մեքենաների մասին մտածել թե չե ուզում ես առաջ մտուրը կապել, իսկ հետո ձին առնել:

Ծիծադ:

ՇԶՈՒԿԱՐ. Եեվ փուստ նստեց մեր Լյուբիշկինը:

ՍՆԻՍՅԱ. Մենք բոլորս սիրով-ուրախությամբ կոլխոզ կմըտնենք:

ՆԱԳՈՒԼՈՎ. Ընկերներ, կոլխոզը շատ լուրջ զործ ե: Ով գըլ գում ե կոլխոզ, թող ձեռք բարձրացնի: Բոլորը ձեռք են բարձրացնում:

ՌԱԶՄՅՈՒՏՆՈՎ. Միաձայն:

ԴԱՎԻԴՈՎ. Այժմ մենք կսկսենք քննության առնել կուլակներին: Վորոշում հանենք նրանց, Հյուսիսային կովկասից արտաքսելու մասին, թե վոչ:

ՇԶՈՒԿԱՐ. Սաորագրում ենք:

ԼՅՈՒԲԻՇԿԻՆ. Արմատից կտրել:

ԴԱՎԻԴՈՎ. Վոչ, ավելի լավ ե արմատահան անել, քան արտից կտրել: Վորոշենք, թե ում պետք ե կուլակթափ արվի: (Խազմյանովվը նրան ե տալիս մի թերը: Գավիդովը կարգում ե) Ֆրու Դամասկով: արժանի՞ յե նա պրոլետարական այդպիսի զատաստանի: (Բոլորը ձեռք են բարձրացնում, բացի Ախվատեկինից): Իսկ դու, քաղաքացի, գու ինչու ձեռք չես բարձրացնում:

ԱԽՎԱՏԵԿԻՆ. Չեռնպահ եմ:

ԴԱՎԻԴՈՎ. Այդ ի՞նչներ:

ԱԽՎԱՏԵԿԻՆ. Վորովինետե նա իմ հարկանն ե և նրանից յետ շատ լափություն եմ տեսել:

ՆԱԳՈՒԼՈՎ. (Բդավում ե) Դուքս գնա ժողովից անմիջապես:

ԴԱՎԻԴՈՎ. Վոչ, այդպես չի կարելի, ընկեր: Մի գուրս գնա, քաղաքացին, բացատրիր մեզ քո գիծը: Դամասկովը, քո կարծիքով, կուլամկ ե, թե վոչ:

ԱԽՎԱՏԵԿԻՆ. Ցես այդ բանը չեմ հասկանում, յես անգրագետ մարդ եմ, ինպրում եմ թույլ տաք ժողովից հեռանամ:

ԶԱՅՆԵՐ. Գրագետ ե, սուս ե ասում:

ԴԱՎԻԴՈՎ. Վոչ, ինդրում ենք, բացատրիր դու մեզ, թե ի՞նչ լափություն ես տեսել նրանից:

ԱԽՎԱՏԿԻՆ. Վարի ժամանակ յեղներն եւ տվել, սերմացու յետվել... թիչ բան կա... Բայց յես իշխանության գեմ չեմ, յես իշխանության կողմն եմ:

ՌԱԶՄՑՈՑՆՈՎ. Նա քեզ չի խնդրել, վոր իրեն պաշտպանիս: Փողից, ցորենից չի խոստացել... Ի՞նչ եւ խոստացել նա քեզ, խոստովանվիր, մի վախեցիր:

ԱԽՎԱՏԿԻՆ. Գուցե վոչինչ ել չի խոստացել...

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Սուտ ես ասում, կուզմա: Դու ծախված մարդ ես, և գուրս եւ գալիս, վոր կուլակի կամակատար ես:

ԴԱՎԻԴՈՎ. Վոչ, քաղաքացի, դու մեր չքավորական դասակարգը խայտառակ մի արա, ուղղակի ասա, մւմ կողմն ես: (Յիշվատինը մոտենում է կնօցը, ընջում է նրա հետ, ապա բարձրացնում է ձեռքը) **ՍԻՄԵՈՆ ԼԱՊՀԻՆՈՎ:** (Ձեռքերը բարձրանում են) Տիտ Բորոդին. ով ե կողմանկից: (Ընդհանուր լուրյուն ե, ժփարվում է նույնիսկ նագուլնովը) **ՍԱ Ի՞ՆՉ ԼՈՒԹՅՈՒՆ ե, ի՞նչ ե պատահել:**

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Բանն այսպես ե. այդ Բորոդինը — մենք նրան ծիտոկ ենք ասում—18 թվին մեզ հետ միասին կամավոր մտավ կարմիր գվարդիա: Ինքը լինելով չքավոր, կովում եր հերոսաբար, վերքեր եւ ստացել, պարզեատրվել եւ արծաթյա ժամացույցով՝ հեղափոխական աշխատանքի համար: Յեվ, հասկանում ես դու, ընկեր բանվոր, ինչպես նա մեր բոլորի սիրտը խոցեց: Ատամներով պինդ բռնեց իր տնտեսությունից: Աշխատում եր որ ու զիշեր, ամբողջովին մազակալեց, ջրաղաց գնեց, հետո յել թիթհան սարքեց: Տափար-վոչիսար, իմաստ ամոթանք տվինք: Ի՞նչ կարող ենք անել, յերբ մարդը զիվահարել եւ Տեսնում ենք սեփականությունը կըրծում է նրան, նորից ենք կանչում, համոզում ենք, սպառնում վոր հողի հետ կհավասարենք, յեթե նա ուզում է բուրժույ դառնալ և չսպասել համաշխարհային հեղափոխության:

ԴԱՎԻԴՈՎ. Կարճ ասա:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. (Հանկարծ ձայնը իջեցնելով, սոգորված) Այդ մասին կարծ ասել չի կարելի: Դա մի այնպիսի ցավ ե, վոր շատ խորն ե: Այդպիս ուրեմն, Տիտոկը մեզ պատասխանում ե՝ «Յես կատարում եմ խորհրդային իշխանության հրամանը, ավելացնում եմ ցանքը, իսկ յեթե բանվորներ եմ պահում, դա յել որենքով ե — իմ կինը կանացի հիվանդություն ունի... Յես, ասում ե, վոչինչ եյի, բայց ինչպես ասում են, զարձա ամեն ինչ, — զրա հա-

մար ել կոիվ եմ մզել: Մենք նրան ձայնազուրկ արեցինք: Բայց նա շարունակում ե մինչև այժմ ել մնալ այդպիս... Բանվորներին, ճիշտ ե, արձակեց:

ԴԱՎԻԴՈՎ. Ուրեմն ել բանն ինչումն ե: ՆԱԳՈՒԼՆՈՎ. Այդ պատճառով ել ժողովը լուր ե: Յես միայն բացատրում եմ, թե ով ե յեղել անցյալ թանկագին ժամանակ ներկայիս կուլակ Տիտ Բորոդինը:

Լուրյուն:

ԴԱՎԻԴՈՎ. Ի՞նչ ես դու մեղ այստեղ խղճահարական պատճություններ պատմում: Պարտիզան ե յեղել՝ փառք ու պատիվ իրեն, դարձել ե կուլակ, թշնամի յե դարձել — պետք ե վոչնչացնել: Ո՞վ ե կողմնակից, վորպեսզի Բորոդինը կուլակաթափ արփի:

Ձեռքերը բարձրանում են վոչ միանգամից, ծանր լուրյան մեջ: Բորք կամաց կամաց ցրվում են: Մնում ե Դավիդովը բրազատված չքալուների խմբով:

ԴԱՎԻԴՈՎ. Դուք լավ գիտակցություն ունեք, փաստ ե: Բայց դուք կարծում եք կոլխոզ մտաք, զրանով ամեն ինչ վերջացավ: Վոչ, զա գեռ քիչ ե: Դուք, չքավորներք, խորհրդային իշխանության հենարանն եք, բայց դուք ձեր յետելց կոլխոզ պիտի տանեք միջակին:

ՇԶՈՒԼԿԱՐ. Ինչպես պիտի տանենք, յեթե նա չի ուզում: Նա յեզ չի, վոր պարանը վիզը դնես ու առաջդ արած, քշիս:

ԴԱՎԻԴՈՎ. Համոզիր: Ուրեմն դու ել ի՞նչ պայքարող ես մեր ճշմարտության համար, յեթե չիս կարող ուրիշին համոզել: Վաղը ճողով ե լինելու, ինքող ձայն տուր, միջակ հարեւանիդ ել համազիր ձայն տա:

Ակսում են ցրվել:

ՌԱԶՄՑՈՑՆՈՎ. Դու ի՞նչ կասես, Մոլչուն:

ՄՈԼՉՈՒՆ. Յես համաձայն եմ:

ՌԱԶՄՑՈՑՆՈՎ. Ինչին ես համաձայն:

ՄՈԼՉՈՒՆ. Համաձայն եմ միասին վարենք ու ցանենք:

ՌԱԶՄՑՈՑՆՈՎ. Դե վոր այդպիս ե, լավ ե: Ուրեմն այդպիս ել կանենք, միասին կլինենք:

Մոլչումը գնում ե:

ՌԱԶՄՑՈՑՆՈՎ. Գնանք տուն: (Հրաժես ե տալիս) Նշանակում ե վազը կուլակաթափ ենք անում:

ԴԱՎԻԴՈՎ. Վաղը:

Բոլորը գնում են, մնում են Դավիդովը յեկ Նազուլնովը:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Լսիր, ընկեր Դավիդով, դու ինձ Ֆրու Ռվանու-
յին կուլակաթափ անող խմբում նշանակեցիր:

ԴԱՎԻԴՈՎ. Այս, Բնչ կա վոր:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Յես ավելի լավ ե յերկրորդ խմբի հետ կդնամ,
ցածի կողմբ:

ԴԱՎԻԴՈՎ. Ի՞նչ տարբերություն:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Այդ մասին դու... Բայց միւնույն ե, իմանա-
լու յետ իմ կինը՝ Լուշկան ապրում ե այդ Ռվանոյի վորդու Տի-
մոֆեյի հետ: Յեթե յես գնամ նրան կուլակաթափ անելու, խո-
սակցություններ կլինեն:

ԴԱՎԻԴՈՎ. Ե՛, յեղբայր, խոսակցություններից պիտի վախե-
նալ... Թեսկետ, յեթե ուզում ես, գնա յերկրորդ խմբի հետ: Լսիր,
այդ դժւ յես կնոջ կապտացըրել:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Յես կանանց չեմ ծեծում — սովոր չեմ: Նա յե
արել:

ԴԱՎԻԴՈՎ. Ո՞վ.

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Տիմոշկան, Ռվանոյի վորդին: (Դավիդովը նայե-
լով նրան, գնում ե: Բնմի յետել՝ հարմուսկա յեկ յերգ) Դա ան-
պայման Տիմոշկան ե, նրա հետ ել՝ կինս:

ԶՈՐՈՐԴԻ ՊԱՏԿԵՐ

Տիր Բարոդինի տունը և բակը:

Մտնում են Դավիդովը, Նազուլնովը, Լյուքի Հ-
կի նը, Ծուկար պալը:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. (Ծեծում ե դուռը) Պերֆիւնա:

ՇԶՈՒԿԱԲ. (Դավիդովին) Զգույշ յեղեք, թանկագին ընկեր,
այստեղ մի շատ կատաղի շուն կա, իսկույն կկծի:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Վոչ վոք չկա, — յերեկ փախել են: Պետք ե բակը
Խուզարեկել: (Գնում ե յեկ վերադառնում) Յեզներն եւ, յերեկ,
տարել են:

ԴԱՎԻԴՈՎ. Գուցե սկսենք առանց յեղների:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Ի՞նչ ես ասում, նրա յեզները զյուղում առաջինն
են — ձեռքդ պողերին չի հասնի: Ինչպես կարելի յե: Հարկավոր
ե գտնել թե Տիտոկին, թե յեզները: Դու, ընկեր Դավիդով, Լյու-

բէշէնի հետ գնացեք տունը խոզարկեցեք, իսկ յես Շչուկարի
հետ այստեղ մտիկ կտամ:

Դավիդովը յեկ լյուքի Հ-կի նը գնում են տուն: Նազուլ-
նովը յեկ Շչուկարը դուրս են գնում բեմի յետել: Բնմում յերե-
վում ե տ իտ քոր ոդի նը, քազմվամ ե սահմակի մեջ, վրան մի
փալապի կառը ծածկիլով: Գալիս ե Ծուկարը, վորոնում ե,
նկատելով Տիր ի վասքը, խաչ ակն բուռն ե, վազ ե տալիս
բեմի յետել յեկ վերադառնում նազունելովի հետ: Նազուլ-
նովը մտնենում ե սահմակին յեկ վերցնում ե Տիր ի վրայից
փալապը:

ՇԶՈՒԿԱԲ. Ե՛, ինչպես անշնորք են թագցրել քեզ...

Տիր, թանկագին հյուր: Իսկ յես այստեղ մի փոքր քնել
եյի: Հին, արյունակից ընկերները միմիանց հանդիպեցին: Միա-
սին պարտիզան ենք յեղեւ, միասին խփել ենք գարշելիսերին:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Փեշիդ տակից եղ բնչ ե ցցված:

Տիր. Հրացան...

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Ինձ տուր հապա:

Տիր. Չեմ տա...

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Տուր, տուր, խաղ մի արա...

Տիր. Վոչ, չեմ տա: Կայքս վերցնում եք, վերջին հրացանն
ել եք ուզում վերցնել Կուլակը պետք ե հրացան ունենա, այդ-
պես են զրում նրա մասին լրազրերում: Յես, զոցե, զրանով
պիտի կարողանում իմ որական հացը վաստակել: Հրացանը մաք-
րել եմ, յուղել եմ — զուցե թշնամի մարդու դեմ հարկավոր գա:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Կատակներդ հետո կանես, Տիրոկ: Իսկ այժմ
լուրջ պահիր քեզ:

Տիր. Հենց են ե, վոտքերս դրոցին չե: Իսկական իմ կատակ
անելու ժամանակն ե: Ինձ համար յես կովով լավ կյանք ձեռք
բերեցի, արդար իշխանություն պաշտպանեցի, իսկ նա գրա հա-
մար ինձ... (Ուզում ե հրացանը հանել):

ՆԱԳՈՒԼՆՈՎ. (Նազանն ուղղելով նրան) Յեթե ուզում ես կրակել,
միւնույն ե, չես հասցնի:

Նազանն ուղղելով նրան, Դավիդովը յեկ Նազուլնովը: Դավիդ են Դա-
վի իդովը յեկ Նազուլնովը: Մինչ այդ Տիր քազցնում
ե հրացանը:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Հրացանը տուր, միւնույն ե, վերցնելու յենք:

Տիր. Ի՞նչ հրացան, Յերեկ աչքիդ ե յերկացել:

ԴԱՎԻԴՈՎ. Քաղաքացի, զենքը հանձնիր: Քեզ համար ավելի
լավ կլինի:

Տիր. Յես զենք չեմ ունեցել:



ԴԱՎԻԴՈՎ. Դե, ինչ արած, հարկադրված ենք լինելու ձերբակալել քեզ և ուղարկել շրջան:

ՏԻԾ. Ի՞նձ ձերբակալել:

Սահնակի միջից խւելով յերկարյա մի յերկար ճող, խփում ե Դավիդովի գլուխ: Դա վիդով վե յերերամ ե, Նազուլ նու լինով ը յեվ Լյուրի շինը հարձակվում են Տիտի վրա, կապիապում են: Շչուկարը վազում ե թեմի յետել: Այնուղից շան հաջոց ե լավում:

ՇԶՈՒԿԱՐ. (Ներս վազելով) Հայ հավաք, բարի մարդիկ, սպառում են: (Նրա մուտքակը պատառում ված է) Մակար, ատրճանակն ինձ առուր, անուր, քանի սիրու վառված ե: Յես այդ շանը իրատիրոջ հետ կսպանեմ: (Չննելով պատառում ված մուտքակը, լաց ե լինում) Պառավի քուրքն ե, հրմի հոգիս կհանի:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Բավական ե վոռնաս: Լյուրիշկին, լծիր սահնակը, գարշելուն Գեղեղի տանենք: (Եղուկարին) Ոգնիր ընկեր Դավիդովին, ներս տար լվացվի:

ՇԶՈՒԿԱՐ. Ընկեր Դավիդով, կենդանի յես:

ԴԱՎԻԴՈՎ. Վոչինչ, դիմացկուն եմ... (Գնում ե տուն, բաւկի հակը զլիխն սեղմած):

ՇԶՈՒԿԱՐ. (Հեծկւալով) Քուրքը... Պառավի մուշտակը...

ՆԱԳՈՒԽՆՈՎ. (Գրում ե) «Գեպեռու շրջանային լիազորին: Սրա հետ միասին ուղարկում եմ ձեզ կուլակ Տիտ Կոստանդինովիչ Բորոդինին, վորպես հակաճեղափոխական գարշելի ելեմնտի: Հիշյալ կուլակի կայքը հանձնելու ժամանակ նա պաշտոնապես հարձակում գործեց քանանինքիազարական ընկեր Դավիդովի վրա և կարողացավ յերկաթի ձողով հարգածել զլիխն, թեպետ առանց լուրջ հետեւանքի: Բացի դրանից, հայտնում եմ, վոր տեսս այդ գարշելու մոտ ուղական սիստեմի հրացան, վորը խլել չկարողացա հանդամանքների պատճառով: Գրեմյաչի ստանիցիայի ՀԿԿ(բ) բջիջի քարտուղար կարմրադրոշակիր նազուլով»:

ՏԻԾ. (Ծարժում ե անում, ուզում ե բարձրանալ) Հիշիր, Մակար, մեր ճանապարհները կհանդիպեն: Դու ինձ վոտնատակ տվեցիր, այն ժամանակ յես ել այդպես կվարվեմ: Մեր բարեկամության վրա խաչ քաշվեց: Միենույն ե, կսպանեմ:

Լյուրի շինի այցել՝ հատ... Ընկեր Դավիդով, կարելի յեմեկնել:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. (Մոտենում ե Բորոդինին) Գնա, հակա:

Գ. Ա. Բ. Գ. Ո. Ի. Ց. Ռ

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՃԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Ժողով. Յ-րդ պատկերի բեմը: Վակի գով վերջացնում ե իր վարագույրը բարձրանալիս Դավիդով վերջացնում ե իր ներձանկան խոռը:

ԴԱՎԻԴՈՎ. (Գլուխը կապված ե բաւկինակով) Ահա թե ինչու, ընկերներ, մենք ձեզ բոլորի հրավեր ենք կարգում կոլխոզ մտնել: ՌԱԶՄՑՈՑՆՈՎ. Ընկերներ, հվ հարցեր ունի: ԱԽՎԱՏԻՆԻ, Կոլխոզը ժամանակավոր ե, թե հավիտենական: ԲԱՆՆԻԿ. Մենատնտեսների հողը խլելու յին: ԱՏԱՄԱՆՉԶՈՒԿՈՎ. Իսկ տնելը: ԴԱՎԻԴՈՎ. Կոլտնտեսություն մտնել չկամեցող մենատնտեսների հողն իրենց կմնա:

ՌԱԶՄՑՈՑՆՈՎ. Ընկերներ, արտահայտվեցեք:

Բաննիկը մտնենում ե սեղանին:

ԲԱՆՆԻԿ. Յես միջակ հողագործ եմ: Յես այսպես կասեմ, քաղաքացիներ: Խոսք չկա, կոլխոզը լավ բան եւ Բայց այստեղ հարաբերակող ե լավ միտք անել: Զի կարելի, վոր առանց այլեալու կագոր ե լավ միտք անել: Հիշիր լիազորը հողագործությունից քիչ թյան կոլխոզ մտնես: Ընկեր լիազորը հողագործությունից քիչ թյան կամկանում: Նա իր կյանքում գութանի մաճ չի բռնել: Յեվ, նշանակում ե, չգիտե, թե վոր կողմից պետք ե մոտենալ յիշի գան: (Միջակ) Այդ պատճառով ել նա մի փոքր սխալվեց: Կուզոնում հարկավոր ե, իմ կարծիքով; մարդկանց այսպես միացնել նրանք, ովքեր աշխատող են, անասուն ունեն, նրանց մի կոլխո-

դում, ունեվորներին ել, հասկանալի յե, մի կոլխոզում: (Զայներ-
իսկ չբավարների՞ն) Զքավորներին նույնպես առանձին կոլխոզ,
իսկ լողորներին արտաքսել՝ վորպեսզի ԳԵՊԵՌԻ-Ն նրանց աշխատել
սովորեցնի: Բավական չե մարդկանց խմբել միասին: Միևնույն
ե, դրանից բան չի դուրս գա, ինչպես հեքյաթի մեջ ե ասլած՝
«Կարապը թերեն ե թափ տալիս և ուզում ե թռչել, իսկ խեցե-
տինը յետ ե քաշում, ձուկն ել ուզում ե ջուրն ընկնելը»:

ԼՅՈՒԲԻՇԿԻՆ. Գրիգորի, մեկ-մեկ դու շատ քաղցր ես խոսում:
Թե վոր կնիկ լինեյի, խոսքերիցդ չեյի կշտանա: (Ծիծաղ) Դու
ժողովին այնպես ես համոզում, ասես Պալագա Կուլմիշենան լի-
նի: (Քրիջ) Մարդկանց այդպես ջոկջելը քեզ համար լավ ե, դու
դրան սովորել ես յերեկ այն ժամանակ, յերբ Ֆրոլ Ռվանոյի մոտ-
ծառա յետ յեղել: Դու յերեկ հիմի յել կուզենայիր հարուստների
շվաքի տակ ապրել:

Ապմուկ:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. (Մոտենում ե սեղանին) Խոսքը իմն ե,
քաղաքացիներ:

ՆԱԳՈՒՅՆՈՎ. Առանց վիճաբանությունների, հարցը պարզ ե:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Այսինքն Բնչպես թե պարզ ե: Գուցե յետ
ուզում եմ առարկել, թե յետ չեմ կարող քո կարծիքին հակառակ
լինել: Այդ դեպքում յետ կարող եմ հեռանալ: (Գնում ե տեղը):

ԴԱՎԻԴՈՎ. Վոչ, սպասիր, քաղաքացի: Ընկեր Նագույննվ,
այդպես չի կարելի: Խոսիր:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Յետ այսպես կասեմ. կոլխոզը կամավոր գործ
ե, ուզում ես մտիր, ուզում ես կողքից մարիկ տուր... Մենք ու-
զում ենք կողքից մտիկ տալ:

ԴԱՎԻԴՈՎ. Այդ ով «մենք»:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Հողագործներս, այսինքն:

ԴԱՎԻԴՈՎ. Դու քո մասին ասա, պատիր: Ամեն մարդ լեզու
ունի, փողով չի առել, ինքը կարող ե ասել:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Կարող եմ և իմ մասին ասել: Այսինքն,
իմ մասին ել հենց խոսում եմ: Յետ ուզում եմ տեսնել, թե ինչ
կյանք ե լինելու կոլխոզում: Յեթե լավ լինի, կզրվեմ, լավ չե
լինի—ել ինչ գործ ունեմ յետ այնտեղ: Հիմար ձուկն ե միայն,
վոր ինքն իրեն թոռն ե ընկնում:

ԶԱՅՆԵՐ. Ճշմարիտ ե, կսպասենք գեռ:

ՌԱԶՄՅՈՑՆՈՎ. Խոսքը պատկանում է Ախվատկինին: Խոսիր,
կուզմա:

ԱԽՎԱՏԿԻՆ. Յետ իմ մասին կասեմ, քաղաքացիներ: Մենք
հարազատ Պյոտր յեղբորս հետ միասին եյինք ապրում, բայց և
այնպես ելի չեյինք հաշովում: Մեկ կնանիք եյին իրար յախա-
կաչում, այնպես վոր բաժանել չեր լինում, իրար մաղ եյին քաշ-
քում: Մեկ յետ ու Պետրովսան եյինք կաչում իրար: Իսկ այս-
տեղ ուզում են բոլորիս միասին մի կույտ անել: Յեվ կստացվի
մի Սոգոմ—Գոմոր: Հենց դուրս ենք յեկել վար անելու թե չե,
իսկույն կուի և լինելու: Մեկը շատ կաշխատի, մեկելը քիչ: Մեր
աշխատանքը տարբեր աշխատանք ե, դա գործարանում ստանոկի
առաջ կանգնելու նման չի, այնտեղ ութը ժամ աշխատեցիր,—
աշխատեցիր,—վերջացավ, տրոստդ առ, գնա քո գործին:

ԴԱՎԻԴՈՎ.

ԱԽՎԱՏԿԻՆ. Յետ, ընկեր Դավիդով, չեմ յեղել, բայց իմա-
նում եմ:

ԴԱՎԻԴՈՎ. Վոչինչ ել չետ իմանում դու: Յեթե չետ յեղել, չետ
տեսել, ել ինչու յետ լեզվիդ զոր տալիս: Դրանք կուլակի խոսքեր
են տրոստավոր բանվորի մասին:

ԱԽՎԱՏԿԻՆ. Թող առանց տրոստի լինի: Աշխատանքդ վեր-
ջացրիր, գնա: Իսկ մեզանում վեր ես կենում դեռ լույսը չբացված,
մինչև իրիկուն քառասուն քրտինք ես մտնում, վոտքերիդ վրա
ձվի մեծությամբ բաշիկներ են գոյանում, իսկ գիշերը պետք ե
յեղներն արածացնես, չընես. յեղը վոր կուշտ չլինի, գութանը
չի քաշի: Յետ պետք ե կոլխոզում աշխատեմ, իսկ ուրիշը, ասենք
մեր կալիբան, պիտի ակոսի վրա քնի: Թեպետ և խորհրդային
իշխանությունն ասում ե, վոր չքափորների մեջ լողիներ չկան,
վոր դա կուլակի հնարածն ե, բայց դա ճիշտ չե: Կալիբան իր
ամբողջ կյանքն անց ե կացրել փեշի վրա պառկելով: Կողքերն
այրել ե քարփիչների վրա: Յետ ինչպես պիտի նրա հետ աշ-
խատեմ:

Ուժգին աղմուկ:

ԼՅՈՒԲԻՇԿԻՆ. Կալիբան մեղ համար որինակ չի:

Աղմուկ մեծանում ե:

ԴԱՎԻԴՈՎ. Ընկերներ, սա ինչ բան ե: Ո՞վ ե այսպես ժողով
կառավարում: Մեկը խոսում ե, իսկ մյուսները պիտի լսեն:
Փաստ ե:

ՌԱԶՄՅՈՑՆՈՎ. Ի՞նչ ժողովուրդ եք, հասկացողություն առ-
ված բանը չընեք: Այնպես են քում, վոնց վոր անասուն: Ժո-
ղովը շարունակվում ե:

ԱԽՎԱՏԿԻՆ. (Գոռում ե) ԶԵՄ ստորադրում կոլխողին:
ՈՒՍՉՄՑՈՏՆՈՎ. Ի՞նչ ես բուղայի նման գոռում, կուզմա+
Խոսքը արվում ե կոնդրատ Մայդաննիկովին:

Մայդանի կովը մոտենում է տեղանին, գրպանից համելից
ծոցածեսը:

ԱԽՎԱՏԿԻՆ. Ճառ ես կարգալու:

ԲԱՆՆԻԿ. Սա իր ամբողջ կյանքում գրում ե թղթի վրա—գրա-
գետ ե:

ՄԱՅԴԱՆՆԻԿՈՎ. Սպասեցք ծիծաղել, գուցե հետո լաց եք
լինելու: Գրում եմ այս, ինչով կերակրվում եմ: Այստեղ զանա-
զան խոսքեր յեղան, բայց վոչ մեկը խելքը գլխին խոսք չեր:
Իմ տնտեսությունը միջակ ե: Անցյալ տարի ցանել ես հինգ դե-
յատին և ունեմ, ինչպես հայտնի յե ձեզ բոլորիդ, մի զույգ յեզ,
կով, կին և յերեք յերեխա: Բանվորական ձեռքերն ահա սրանք
են միայն: Ցանքից վերցրի ինսուն փութ ցորեն, տամնութ փութ
հաճար և քսան փութ կորեկ: Ընտանիքս կերակրելու համար հար-
կավոր ե վաթմուն փութ: Հավերի ու թռչնեղենի համար հար-
կավոր ե տասը փութ: Կորեկը մտում ե ձիու համար: Ի՞նչ կարող
եմ ծախել յես պետությանը: Յերեսուն ութը փութ: Իրար վրա-
հաշված մեկ մանեթ տասը կոպեկով, կանի քառասուն մեկ մանեթ
զուտ յեկամուտ: Ասենք, հավ կծախեմ, բադ կտանեմ ստանիցա,
կստանամ տասնինգ մանեթ, կարող եմ յես այդ փողով հագուստ
առնել, կոշիկ առնել, լուցի, սապոն առնել: Իսկ ձին պայտելու
համար փող հարկավոր ե: Ի՞նչ եք սուս արել: Կարող եմ յես
այսուհետեւ այսպես ապրել Բայց դեռ լավ ե, յեթե բերք լինի,
իսկ յեթե հանկարծ բերք չեղավ: Այն ժամանակ ով իմ յես —
մուրացկան: Այլևս ի՞նչ իրավունք ունեք դուք ինձ կոլխոզ մըտ-
նելուց յետ պահել: Միթե կոլխոզում ինձ համար ավելի վատ-
կինի, քան այսպես: Սուտ եք ասում:

ԼՅՈՒԹԻՇԿԻՆ. Հուպ տուր շան վորդկերանց, կոնդրատ:

ՄԱՅԴԱՆՆԻԿՈՎ. Յեզ հուպ կտամ, թող խելքի գան: Այն
պատճառով եք դուք կոլխոզին հակառակ, վորովհետև ձեր կովից,
ձեր հավաքուն բակից զենը լույս աշխարհ չեք տեսնում: ՀԿԿ(Ք)
ձեզ նոր կյանքի յե քաշ տալիս, իսկ դուք կույր հորթի
նման քացիւ քացի յեք անում, գլուխներդ եք թափահարում, իսկ
հորթը յեթե մոր ծիծը չծծի, աշխարհում ապրել չի կարող: Ահա
բոլորը: Յես հենց հիմա կնստեմ գիմում կդրեմ կոլխոզ մտնելու+
իսկ ով չի ցանկանում, թող ուրիշներին չխանգարի:

ԴԱՎԻԴԻՇԿԻՆ. Իսկ դու ինչու յես բերանդ ջուր առել, ընկեր
Ուստըլովնով: Դու հասկացող արմատական հողագործ ես, բայց
վոչ մի խոսք չես ասում:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Դու մտիկ եմ անում, ընկեր Դավիդով, նուրբ
գործ ե, անսովոր ենք:

ՈՒՍՉՄՑՈՏՆՈՎ. Զե, պարզ ե, քաղաքացիներ: Ով կոլխոզի

կողմանակից ե, ձեռք բարձրացնի: (Համարում ե) Մի յերբորդը...
թիչ ե, ընկերներ:

ԴԱՎԻԴԻՇԿԻՆ. Նշանակում է Մայդաննիկովը ձիշտ եր ասում ձեր

մասին:

ԲԱՆՆԻԿ. Մայդաննիկովը մեզ համար որենք չեմ:

ԱՏՍՄԱՆՉՈՒԿՈՎ. Մեր հայրերը, պատերն ապրել են... Դու

մեզ զոյ մի արա:

ԲԱՆՆԻԿ. Կոլխոզ մտնել չենք ուզում—մի համոզիր:

ՈՒՍՉՄՑՈՏՆՈՎ. Ժողովը համարում եմ փակված, ցրվեք ձեր
տները:

Ժողովարդը կամաց-կամաց ցրվամ ե:

ԶԱՅՆԵՐ. Կարիք չկա մեզ հիմարների նման քշել: Հիմարների
պես աղջկներին կարելի յե քշել և վոչ թե ամբողջ ժողո-
վրդին:

ԶԱՅՆ. (Խորից) Տիտոկի առած արյունը քիչ ե դեռ, ելի
կարելի յե:

Լեդիանուր շարժում աղմակ վամանի շտապում են հեռանալ

ԴԱՎԻԴԻՇԿԻՆ. (Վեր ե կենում յեկ առաջանում ե ձայնի ուղղու-
թյամբ) Ե՞ր, թշնամու ձայն... Քիչ արյուն են առել ինձանից:

Եկու կապրեմ այնքան, մինչև ձեզ նմաններին բոլորիդ վերջ
Յես գես կապրեմ այնքան, մինչև լինի, կուսակցության համար, բան-
տամ: Բայց, յեթե հարկավոր լինի, կուսակցության համար, բան-
մորական գործի համար յես իմ ամբողջ արյունը կտամ: Լուսւմ
ես, գարշելի կուլակ: Բոլորը, մինչև վերջին կաթիլ արյունը:

ՆՅՈՒՇԻՆՈՎ. Ո՞վ եր (Սուլոց բեմի յետեվ) Բոնիր գար-

Նելուն...

Բեմը դատարկվում ե: Վերջինը զնում ե Աստրականի վը
Հրաժեշտ ե տալիս, հանում ե գիխակը:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Կոլխոզ կորվեմ... Հավանական ե գրվեմ:

ԴԱՎԻԴԻՇԿԻՆ. (Թագլյունեալին) Միայն մի յերբորդ մասը գրվեց...

Միայն մի յերբորդը:

ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Հ-ըդ պատկերի բեմը։ Ոստըովնովի խրճիթը։

Կուլյաների ժողով: Ներկա յեն Ֆրան Ռազմանյանը, Ատաման Հայուսուկովը, Ախվատիկի Երանեցի Բաննիկը, Ռատորագնովը, Խոպրովը: Դուռը ծեծում են:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. (Լուսամուտից դուրս նալելով) Տիմոֆեյն է:

Բաց ե տնօւմ դուռը, Աերս ե բողնում Տիկնիկեան:

ՅՐՈԼ. ԳԱՍՊԻՐ: Պատմիր, Տիմոֆեյ

ՏիՄՈՒՅԵՅ. Յեղա գատախաղի մոտ, գանգատվեցի Անդրյուշկա Խազմյոտնովի դեմ: Դատախաղը վոչ միայն բողոքս չընդունեց, այլև ինձ ել ուզեց ձերբակալել:

ՅՐՈՒՆ. Ահա թե ովքեր են իշխանավորները:

ԲԱՆՆԻԿ. Սա ի՞նչ կյանք է:

**ՏիՄՈՒԹԵՅ. Այսպիսի կյանք է, վոր յեթե մի բանդա լիներ,
անմիջապես ձի կնստեյի ու կակայի կոմունիստներից արյուն
առնել:**

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Դժվարացել ե կյանքը, շատ ե դժվարացել...
Յեթե սրանով վերջանա, ելի փառք ապառէծո...

ՑՐՈՒ. Ո՞ւմ համար փառք աստծու Քեզ ձեռք չտվեցին — ելի են ես, ինչպես թագավորի ժամանակ... Իսկ մեզանից վերջին

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Յես այդ մասին չեմ ասում. վախենում եմ, վոր երի ուրիշ բան գուրս չգտ հանկարծ:

ՅՐՈԼ. Աւրիշ ԲՆՏ:

ԱՍՏՐՈՎՆՈՎ. Պատերազմ:

ԱԽՎԱՏՔԻՒՆ. Տայ ասոված: Եղալես մի բան արա, զորավոր սուրբ Գևորգ:

ՅՐՈՒ. Դադանակներով կցնանք:

ՏԻՄՈՖԵՅ. Յերակները կպոկեյի կենդանի. կենդանի:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Դիվահարել և ժողովութելը, — առամներով կողմէ:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Հարիսան ստանիցաներում անհանդիստ է, վորոշ տեղեր արդեն սկսել են կուռնիստներին խելք սովորեցնել ինչպես առաջները—գլուխները տոպրակն՝ ու ջուրը... Իմ նախկին զնուից մեկը յեկել եր, ասում ե ամբողջ Հյուսիսային Կովկասում անհանդիստ է: Ցածի ստանիցաներում, իբրև, կանայք արդեն ընդ-

Հանուլը են, կոմունիստները բաց-բաց քնում են ուրիշների կանաց հետ: Իսկ գարնանը ոտարերկրյա դեսանտ և սպասվում ԽՈՊՐՈՎ. Յակով Լուկիչ, գուռ ահա ինչ ասա. ասենք լավ, մենք ազստամբվեցինք, մեր կոմունիստների հաշիվը տեսանք, իսկ յեթե կայարանից զորքերը մեզ վրա շարժվեցին, այն ժամանակ ի՞նչ: Ո՞վ կառաջնորդի մեզ նրանց գեմ: Սպաներ չկան, ինքներս խավար մարդ ենք, ճանապարհն աստղերով ենք զորոշում. այսինչ կովի ժամանակ զորքերն առանց մտածելու, առանց հաշվի չեն շարժվում, այլ պլաններով են ճանապարհ վորոնում, քարտեզներ են նկարում շտաբներում: Զեռքեր կունենանք, բայց զլուխ՝ վոչ:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Գլուխ ել կինի: Սպաներ կհայտնվեն: Երանք
ավելի ուսայալ են, քան կարմիր հրամանատարները: Հին յունկեր-
ներից են գուրս յեկել և գիտություն են սովորել: Վերցնենք հենց
ասենք, մեր Մակար նագույնովին, զլուխ կտրելու մեջ նա վար-
պետ ե. բայց կարող ե մի հարյուրակ առաջնորդել:

ԶԱՅՆԵՐ. Ամենախիս:

ԽՈՂՐՈՎ, Իսկ սպանելը վժըտեղից կհայտնվեն

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Ի՞նչ ես տղի նման կպել ինձանից։ Վ՞րբաեղից
վ՞րբաեղից — կնանիք կը բռեն։

ՖԼՈՐ. Արտասահմանից կդան, անպայման կդան

ԽՈՂՊՈՎ. Այդ այլպես ե, բայց միայն կազմակերտ այս
խրատվել են, ապստամբության համար նրանք խիստ հարգած են
կերեւ չեն գնա, կուբանն ել չի ոգնի:

ՈՍՏՐՈՎՆՈՒՎ. Կղճան, մի մարզու սմաս կդատան. Խուբան
ամբողջովին հրպեհի մեջ ե... Խոկ կովի ժամանակ այսպես ե—
հիմի յիս եմ տակը, մեջքով գետինն եմ տրորում, բայց մեկ ե—
տիսաը մի առ ժամանակից հետո յիս եմ արգեն թշնամու վրա
քաղի յեմ տալիս նրան:

ԽՈՂՐԾՎ. ԶԵ, յեղբայրներ, ինչպես կամենաք, բայց յսու գրա
համաձայն չեմ: Իշխանության դեմ դուրս չեմ զա և խորհուրդ ե
չեմ տա ուրիշներին: Իսկ զու, Յակով Լուկիչ, իզուր ես ժողովրդի
գրգռում այդպիսի գործի: Քեզ մոտ զիշերող սպան ոտար մարդ է
Նա ջուրը կպղտորի ու մի կոզմ կքաշվի, իսկ մենք կըկին պետ
ե պատասխան տանք: Այս կովի ժամանակ նրանք մեզ խորհր
դային իշխանության դեմ հանեցին, կազակներից որ պակաս սպա
ներ թխեցին, բայց հենց բանը հասավ պատասխան տալուն, ո
յեղավ ընդհանուր մեղքերի պատասխանատուն: Իսկ սպաները
ուրիշ բարի ծնություններն անմիջապես նավերով ոտար տաք յե

կրներ գնացին: Վոչ, ձեր գործին յես մասնակցողը չեմ, իսկ դուք լավ միտք արեք:

ՖՐՈԼ. Գնում ես մատնես, Հուղարկած: Իսկ յեթե հայտնի դառնա, վոր դու պատժիչ զորագնդում կալմիկների հետ...

ԽՈՂԲՈՎ. Դու, պապի, մի բորոս, յես ինքս, նախ և առաջ, ինքս ինձ կմատնեմ: Այդպես ել կասեմ. «Յեղել եմ պատժիչ զորագնդում, յեղել եմ պողխորունժի, դատեցեք»: Բայց և դուք, տեսեք, և դու, քավթառ շուն, դու իմ վողջ արյունն ես ծծել — գոնե մեկ անդամ կհրճվեմ ձեզ վրա: (Տեմոֆեյին հրելով, դուրս ե գնում):

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Այժմ կորած ենք մենք: (Գլխարկն առնելով փախչում ե):

Նրա յետեվից գնում ե Բաննիկը: Մտնում ե Պոլովցեվը:

ՊՈԼՈՎՑԵՎ. (Ուստովնովին) Սրիկա: Անսանեն: Այդ ի՞նչ արեցիր, քավթառ շուն, ուզում ես կորցնել ինձ: Ուզում ես գործը տապալել: Յես քեզ ինչպես եյի հրամայել: Առանձին-առանձին շոշափել տրամադրությունները: Դու այդ ինչը ես անում: Յերկու ֆրոնտի վրա յես խաղ անում: Յես քեզ յեզների համար ի՞նչ հրամայեցի, — իսկ դու ի՞նչ ես արել:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Ո՞խ, ո՞խ, յեզներին մրսացրել եմ, Ալեքսանդր Անհսիմիչ, ճիշտ-ճիշտ կատարել եմ, բայց ինքս ել հազիվ կենդանի դուրս պրծա: «Դու այս ի՞նչ ես արել, գարշելի»: Գիտեք նրանք շատ շուտ են դատաստան անում: (Յուլյ ե տալիս նշան-ներով):

ՊՈԼՈՎՑԵՎ. Մեր դատաստան տեսնելն ել յերկար չի լինի... Կացինը վերցրու գնանք:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Ո՞ւր:

ՊՈԼՈՎՑԵՎ. Դավաճանի մոտ: Ընտանիք ունի՞:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Միայն կինն ե:

ՊՈԼՈՎՑԵՎ. Հարեւանները մոտիկ են:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Մի կողմից մարագն ե, իսկ մյուս կողմից՝ այգին: ՊՈԼՈՎՑԵՎ. Գնանք:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Ի՞նչ կասեք, Ալեքսանդր Անհսիմովիչ, յեթե մարդ վերցնենք հետներս:

ՊՈԼՈՎՑԵՎ. Ո՞ւմ:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Ֆրու Ռվանոյի վորդուն:

ՊՈԼՈՎՑԵՎ. Վստահելի յի:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. Մեր մարդն ե:

Պոլովցեվը գլխով դրական նշան և անում:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. (Կացինը տալիս ե Տիմոֆեյին) Տիմոֆեյ, գնանք: Տիմոֆեյը նայում է հորը. նա մռայլ ձեռքով և անում: Տիմոֆեյը վերցնում է կացինը: Յերեքով դուրս են գնում:

ՅՈԹԵՐՈՐԴԻ ՊԱՏԿԵՐ

Փողոց: Խոպրովի տան մուտքը:

Գալիս են Պոլովցեվը, Ուտ բովնով յել Տիմոֆեյը:

ՊՈԼՈՎՑԵՎ. Լսել ինձ առանց հակառակելու: Յես դուռը կծեծեմ: Դու, տղա, ձայնդ կփոխես, կասես, վոր գյուղխորհրդի հերթապահ ես, թուղթ ես բերել: Հարկավոր ե, վոր նա ինքը դուռը բաց անի:

ՏԻՄՈԹԵՅ. Զգույշ յեղեք, ընկեր, չկիտեմ ձեր անունը. հայրանունը: Այդ Խոպրովը, հավանական ե, զենք կունենա:

Պոլովցեվը վերցնում է Ուտքավնովի կացինը: Տիմոֆեյը ծեծում է դուքը: Լուրջուն: Ապա ծեծում ե Պոլովցեվը:

ԽՈՂՐՈՎԻ ԶԱՅՆԼ. Ո՞վ ե:

ՏԻՄՈԹԵՅ. Յես եմ, քեռի նիկիտա, գյուղխորհրդից եմ: Նախագահից թուղթ եմ բերել: Հրամայեց անմիջապես խորհուրդ դաս: ԽՈՂՐՈՎԻ ԶԱՅՆԼ. Թուղթը դրան տակով ներս գցիր:

Տիմոֆեյը բացվում է: Պոլովցեվի նայում է Պոլովցեվի նայում, նա բացատրաքանում է գլուխը:

ՏԻՄՈԹԵՅ. Զի մանի, սառած ա: Համ ել հարկավոր ա, վոր ստորագրես: Դուրս արի:

Տիմոֆեյը բացվում է: Պոլովցեվի նայում է անմիջապես Խողրովի գլխիմ և զցում վերայից հանձ մօւշտակը, քարշ և տալիս խրնիք: Ուտ բովնով յել սառած-կանգնած է դռանը: Ներսից լսվում է պայշեարի աղմուկ: Մի առժամանակից դուրս ե գալիս Պոլովցեվը:

ՊՈԼՈՎՑԵՎ. (Ուստովնովին) Ներս կնա և դուռը փակիր յետևիցդ:

ՈՍՏՐՈՎՆՈՎ. (Յետ-յետ զնալով) Դուք ինձ ազատեցեք դրանից, ձերդ բարեձնություն, յես արյուն տեսնել չեմ կարողանում, սիրտս թույլ ե:

ՊՈԼՈՎՑԵՎ. Միայն: (Ներս ե զնում: Կանացի նիշ: Քիչ անց

դուրս ե գալիս Տիմոֆեյի նետ) Ճրվեցեք մեկ մեկ:

Պոլովցեվը յել Աստր բովնով յել գնում են: Լսվում է

կանացի ծիծաղ, յերգ՝ «Ներիք, ներիք ինձ իմ գեղեցկուհի, քա
գեղեցկությանն ինձ շատ ե գրավում»...

Ա.Հ.ԶԻԿՆԵՐ. (Յերեվում են) Տեսեք, աղջկերք, Տիմոշկան կրկին
հարբած ե:

Տ ի մ ո ֆ ե յ ը հարակվում ե աղջկերքի վրա — բոլորը փախ-
չում են, նա յերերազ, անցնում է բեմի յետել: Տ ի մ ո ֆ ե յ ն
իրեն հարրած ե ձեվացնում, յերգում ե նույն յերգը:

ՈՒԹԵՐՈՐԴԻ ՊԱՏԿԵՐ

Նագունովի սենյակը

Նագուն նույն, Դավիդով, Ռազմյառնով, ապա
Լուշկան:

ԴԱՎԻԴՈՎ. Խոպրովի սպանության մեջ յես խորհրդավոր բան
իմ տեսնում: Պատճառը կոլեկտիվացումն ե: Փաստ ե:

ՌԱԶՄՅԱՌՆՈՎ. Իսկ յես կարծում եմ, վոր պատճառը կին ե:
Յերկի ձեռք ե տվել ուրիշի կնկա, դրա համար ել սպանել են:

ՆԱԳՈՒՆԻՆՈՎ. Խելքիդ զոռ ես տալիս: Խոպրովին կուլակների
քանակից են սպանել: Ժողովն իրավացի վորոշում կայացրեց բո-
լոր գարշելիներին ցուրտ յերկրներ աքսորել:

ԴԱՎԻԴՈՎ. Իրերը բոլորը տեղն են, կողովուտ չի յեղել... Խոպ-
րովը չքաղոր եր, բայց կողքը կուլակներին եր դեմ տվել: Այո,
բարդ պայմաններ են այստեղ ձեզանում:

Մտնում ե Լուշկան: Բարդը վատիք յեն յենում:

ԴԱՎԻԴՈՎ. Յեկ այդպես, ընկերներ, մեր կոլխոզին տալիս ենք
ընկեր Ստալինի անունը: Պատասխանառու անուն ե, խայտառակ
անել չի կարելի:

ՌԱԶՄՅԱՌՆՈՎ. Դրա հետ բոլորն արմատապես համաձայն են:

ՆԱԳՈՒՆԻՆՈՎ. Միայն թե ինչո՞ւ Յաշշակ Ռոտրովովին վարչու-
թյան մեջ խցկեցիք: Տնտեսական մասի վարիչ — դա նրա
տեղը չի:

ԴԱՎԻԴՈՎ. Նորից սկսեցիր քո յերգը: Կուլտուրական հողա-
գործները մեզ շատ են հարկացոր:

ՌԱԶՄՅԱՌՆՈՎ. Դե, յես տուն գնացիք: (Դնում ե):

ԴԱՎԻԴՈՎ. Յես ել գնամ քնելու ժողովից հետո դլուխս չու-
գունի պես ծանրացել ե.

ԼՈՒՇԿԱ. Իսկ ընթրել չեք ուզում, ընկեր կոլխոզի նախագահ:
Ապրում եք մեր տանը, բայց չեք ճաշում: Թեյ ել չեք խմի: (Չըգ-

ձգվում ե յեկ անցնում խոհանոց, յերգելով «Ներին, ներիք ինձ, իմ
գեղեցկություն»):

ԴԱՎԻԴՈՎ. Շարունակ ժամանակ չունի: Անպիտան կին ունես,
Նագունով:

ՆԱԳՈՒՆԻՆՈՎ. Դա քեզ չի վերաբերում:

ԴԱՎԻԴՈՎ. Բայց քեզ վերաբերում ե: Վաղն և յեթ կփոխա-
դրվեմ մեկ ուրիշ բնակարան: Զգիլիք յե նույնիսկ նայելը: Դե,
դա ինչ ե: (Ծաղրական ձեվացնելով լուծկային) «Ծնկեր կոլխոզի
նախագահ»: Կարգին տղամարդ ես, բայց նրա հետ նազ ու տուզ
ես անում: Ինքդ եյիր ասում, վոր ապրում ե թվանոյի հետ:

ՆԱԳՈՒՆԻՆՈՎ. Ծեծեմ, ինչ ե:

ԴԱՎԻԴՈՎ. Վոչ թե ծեծել, այլ ազգել: Յես այ, ուղղակի քեզ
ասում ես, յես կոմունիստ եմ, բայց այդ բանում իմ ջղերը բա-
րակ են: Յես կծեծեյի նրան և տանից դուրս կանելի: Պատվից
զցում ե նա քեզ մասսայի առաջ, իսկ դու լուսմ ես: Գիշեր-
ներն ուր ե կորչում:

ՆԱԳՈՒՆԻՆՈՎ. Դու ամուսնացած ես:

ԴԱՎԻԴՈՎ. Վոչ, բայց քո ընտանիքը տեսնելով, հավիտյանս
չեմ ամուսնանա:

ՆԱԳՈՒՆԻՆՈՎ. Դու կնոջ վրա նայում ես սեփականության
աչքով:

ԴԱՎԻԴՈՎ. Ի՞նչ գրողի սեփականություն ե: Ընտանիք գո-
յություն ունի, փաստ ե: Իսկ զու քո կնոջ հետ անբարոյակա-
նություն ես տարածում: Յես այդ մասին հարց կհարուցեմ բջի-
ջում:

ՆԱԳՈՒՆԻՆՈՎ. Ուրեմն յես նրան կսպանեմ:

ԴԱՎԻԴՈՎ. Բարով ես յեկել:

ՆԱԳՈՒՆԻՆՈՎ. Դու այդ գործում, ավելի լավ ե, մի խառնվիր:
Յես ինքս վերջ կտամ գրան, իսկ այժմ ժամանակ չունեմ: Յեթե
դա սկսված լիներ յերեկ... բայց յես արգեն շատ եմ համբերել...
Մի քիչ ել կսպասեմ, իսկ հետո... (Հառաջում ե) Միբաս շատ ե
կպած նրան, թե չե վազուց յես...

ԴԱՎԻԴՈՎ. Հասկացիր վերջապես:

Գալիս ե Լուշկան: Դավիդովը մի քայլակալին:

ԼՈՒՇԿԱ. (Սմանը ձեռքին) Նստիր, ընթրիր:

Նագուն նույն մի քայլակալ, մոտենում ե պատին յեկ իր
կիսամուշտակի գրաններում ինչ վոր բան վրօնում:

ԼՈՒՇԿԱ. Ի՞նչ ես ման գալիս:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. (Նստմ և սեղանի մոտ) Գրպանումը ըեզին կա: Դու եյիր պատվիրել: Սեմյոնն եր յերեկ բերել կայարանից: **ԼՈՒՇԿԱ.** (Նետվում ե դեպի նագուլթովի կիսամուօտակը, վորոնում ե գրպաններում) Ճշմարիտ, Մակարուշկա: (Հանում ե գունավար ծնիւթերը, փորձում ե) Մակարկա, Մակարուշկա: (Մոտենամ ե ցույց տալու Դավիթովին):

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Գլիկերյա, ոտար մարդու ներկայությամբ տըկուր ման մի արի:

ԼՈՒՇԿԱ. Նա չի տեսնում:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Վոչ, տեսնում ե:

ԼՈՒՇԿԱ. Վոր տեսնում ե, թող նայի քեփն ուզածի չափ: Գեղցիկ վոտքեր ունեմ: Ոտարներ չկան, Մակարուշկա, այսոր ոտար ե, իսկ վաղը, յեթե ուզենամ, իմը կլինի: Դու հնազանդ մարդ ես... Վարժեցրած ես... Վեր ե կենում, վերցնում ե մուտակը):

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Նորից գնում ես:

ԼՈՒՇԿԱ. Ռեգինները հարկավոր ե ցույց տալ, թէ վոչ: Մարիշկայի աշքերը կչովեն նախանձից:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Մարիշկայի մնա ես գնում:

ԼՈՒՇԿԱ. Իհարկե, իմ հեզ հորթուկա: (Գնում ե):

ԴԱՎԻԴՈՎ. Հորթնեւկ... դու փալասի կտոր ես և վոչ թե հորթուկ, թույլ ես տալիս այդպես ծաղրել քեզ: Խայտառակ ե արել քեզ ամրողջովին:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Իսկ քո՞ ինչ գործն ե:

ԴԱՎԻԴՈՎ. Ինչպես թե ինչ, ԶԵ վոր նա Տիմոշկայի մոտ գնաց: Դու նրան նվեր ես տալիս, իսկ նա գնում ե:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Յես նրան ծեծել չեմ կարող: Յես նոր կյանք եմ մտնում և ձեռքերս չեմ ուզի կեղտոտել: Դա անցյալ ժամանակի մարդիկ եյին իրենց կանանց ծեծում: Դու, յելքայր, թող ինձ հետ լուշկայի մասին խոսելը: Կինը շատ լուրջ գործ ե:

Մինում ե: Յեր լուսավորվամ ե, նա գուլնավը չկա: Դա վիգով ե նստած զիրք ե կարդում: Ներս ե վաֆում Ռազմյուտնովը:

ՌԱԶՄՅՈՒՏՆՈՎ. Նստել ես: Ռոմաններ ես կարգում: Իսկ այն իմացել ես, վոր կրպակը յերկու որում յերկուհարյուր փութ աղ ե ծախել — տարի ու կես պառկած եր պահեստում: Մորթիր, ասում են, ճիմի մերը չի, միւնույն ե, վերցնելու յեն մսամթերում, կոլխոզում միս ուտողը չենք: Լավ լուր են բաց թողել: Կերար միսը:

ԴԱՎԻԴՈՎ. Մպասիր, այդ ինչ ես ասում:

ՌԱԶՄՅՈՒՏՆՈՎ. Կոլխոզի նախագահ ես, գիգանտ ես կառուցում, իսկ մեղանում անասունների կեսը մորթել են:

ԴԱՎԻԴՈՎ. Ո՞վ:

ՌԱԶՄՅՈՒՏՆՈՎ. Սատանաները:

ԴԱՎԻԴՈՎ. (Վեր ե կենում, վերցնում ե վերարկուն) Անմիջապես ընդհանուր ժողով գումարիր:

ՌԱԶՄՅՈՒՏՆՈՎ. Ժողովի ինչ կարիք կա:

ԴԱՎԻԴՈՎ. Ինչպես թե ինչ կարիք կա: Արգելել անասուններ մորթելը: Կոլխոզից կքշենք ու դատի կտանք: Դա շատ կարևոր ե: Դա նորից կուլակներն են փայտ գցում մեր առաջը: (Ներս ե վագում նագունավը) Քեզ ինչ ե պատահել:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Անասունները մորթում են գարշելիները: Ահա յես ինչ եմ առաջարկում, ընկերներ — հենց այսոր իսկ ժողովում վորոշում հանենք միջնորդելու, վորպեսզի չարամիտ մորթողներին գնդակահարեն:

ԴԱՎԻԴՈՎ. Ի՞նչ:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Դնդակահարել, ասում եմ: Ում առաջ պիտի միջնորդել գնդակահարելու համար: Ժողովրդական զատարանը չի կարող: Բայց յեթե մի յերկու հոգու նրանցից, վորոնք հղի կովերն են մորթել, թխացնեն, մյուսներն անկասկած խելքի կգան: Այժմ հարկավոր ե շատ խիստ լինել:

ՌԱԶՄՅՈՒՏՆՈՎ. Միշտ այդպես ե: Ժողով հրավիրենք ուրեմնում: Գնում ե:

ԴԱՎԻԴՈՎ. Յավ ե քեզ հետ ելի, Մակար: Կրկին թեքում ես Մտածիր հապա, կարելի յե կով մորթելու համար գնդակահարել:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Իսկ ինչով պիտի վար անենք, յեթե կոլխոզնիկները յեղները մորթեն: Սյոմա, խղճում եմ քեզ: Ուղեղդ չըշարժվում, ինչ ե: ԶԵ վոր մենք կլորչենք, յեթե ցանք անել չկարողանանք: Միթե չես հասկանում: Հարկավոր ե գարշելիներից մի յերկու հոգու անպայման գնդակահարել անասունների համար: Պետք ե ինսպել բարձր իշխանության այդ մասին:

ԴԱՎԻԴՈՎ. Դու ավելի լավ կանելիք մասսայական աշխատանք տանելիք, բացատրելիք մեր քաղաքականությունը: Իսկ վորտեղ ելիք մինչ այդ:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Այնտեղ, վորտեղ ինքը եյիր:

ԴԱՎԻԴՈՎ. Բանն ել զրանումն ե: Տարվեցինք մենք այս կամպանիան: Այժմ հարկավոր ե շտկել:

Գալիս ե Լուշկան, գունատված:

ՆԱԳՈՒԻԼՆՈՎ. Խսկույն դուքս գնա, Գլիկերյա: Յես քո ներկայությամբ հեղափոխության մասին խոսելու ուժ չունեմ: Յես, կնիկ, քեզ հետ վոչ միայն մինչև հեղափոխություն չեմ հասնի, այլև կարող եմ ճանապարհից շեղվել: (Բղավում ե) Լսեցի՞ր: Հեռացիր:

ԴԱՎԻԴՈՎ. Մպասիր: (Մոտենում ե Լուսկային) Հիվանդ ես, ինչ ե: (Մոտենում ե լուսամուտին: Լսվում ե հարմոնիկայի նվագ յեվ յերգ՝ «Ներիր, ներիր ինձ իմ գեղեցկունի») Կուլակներին ճանապարհ են դուռմա:

ԼՈՒԺԿՈ. (Արտասվում ե) Տիմոֆեյ, Տիմոշենկա...

ՆԱԳՈՒԻԼՆՈՎ. Ան ինչ, կնիկ, հավաքիր քո ունեցած-չունեցածը, բեղինները, պոմաղներն ու զնա, ուր ուզում ես: Անմիջապես դուրս:

Գնում ե Դավիդովի հետ: Լուշկան, մնալով միայնակ, վագում ե լուսամուտի մոտ, արտասվում ե: Հարմոնիկայի նվագը յեվ յերգը մարտաւ ե:

ԻՆՆԵՐՈՐԴ ՊՈՏԿԵՐ

Ցանկապատի մոտ:

Դավիդով, Ռազմիկ յոտնով, Շշուկար յեվ նազարով:

ԴԱՎԻԴՈՎ. Կարծես գաղարել են մորթել: Ժողովն աղդեց: (Հանում ե ծխախոտ, ծիծալում ե):

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Ինչու յես ծիծալում:

ԴԱՎԻԴՈՎ. Գործարանի ընկերները հիշել են ինձ: Պասիլկային ուղարկել: Մեր ծխախոտից ե, լենինգրադի: Հասկանմամբ ես, յես, սատանան տանի, մի տեսակ վորբի նման մարդ եմ—վոչ կին, վոչ վոր: Փաստ ե: Յեվ հանկարծ առ քեզ: Պասիլկա: Ծխախոտ և շոկոլադ: Փաստ ե: (Հառաչելով գալիս ե Շշուկարը) Ի՞նչ ես փորդ բռնել, պապի:

ՇԶՈՒԿՈՎ. Փորս ցավում ե: Ե՞ս, սիրելի զավակներս, կորած եմ:

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Ենքան միս ե լափել վոր գրողի տարածը: Ամբողջ որերով նստած ե արևածաղիկների մեջ:

ԴԱՎԻԴՈՎ. Ճշմարիտ ե:

ՇԶՈՒԿՈՎ. Ո՞խ, սատանան գայթակղեցրեց: Պառավը համոզեց: Շալվարիս կապը ձեռքիս ե մնացել:

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Տեղն ե քեզ: Ի՞նչ հորթուկ ե մորթել...

ՇԶՈՒԿՈՎ. Են տեսակ փորանարինք ե, սիրելիներս... Մաշվեցի: Մի գլուխ թափվում ե, վոնց վոր անպիտան սագից:

ԴԱՎԻԴՈՎ. Ինչու յես յեկել:

ՇԶՈՒԿՈՎ. Ազատիր ինձ հաշվապահի պաշտոնից, նախագահ: Հոգիս հանում ե այդ պաշտոնը: Անիծյալ աքլորներն ամբողջ որը կովում են, հավերն ել թեպետ կնկա ցեղից են, նրանք ել միմյանց կատար են բռնում ու պտույտ գալիս բակով մեկ:

ԴԱՎԻԴՈՎ. Քեզ ինչ:

ՇԶՈՒԿՈՎ. Միթե հավ պահելը տղամարդու գործ ե: Յես կազակ եմ, յես հերոսաբար մասնակցել եմ թուրքական կամպանիային: Իսկ այժմ յերեխաները ծաղրում են ինձ՝ «Հավ տնտղնդպապի, հավ տնտղնդպապի»:

ԴԱՎԻԴՈՎ. Թող, պապի, յերեխաներից ինչ ես պահանջում:

ՇԶՈՒԿՈՎ. Յեթե մենակ յերեխաները լինեյին, վոչինչ, կնանիքն ել նրանցից պակաս չեն: Տուն վոր գնում եմ, հոհողը գցում են՝ «Տես, ասում են, պապի, վարի ժամանակ ամեն մի հավ մի-մի սալակ ձու պիտի տա, թե չե, ասում են, քեզ կհարկադրենք համերի վրա թռչես»: (Յեցվում ե, բռնում ե փորը, փախչում ե):

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Նորից վաղեց արևածաղիկների մեջ:

Ծուկաբը վազում ե բնեով, ընդհարվելով Նազուլնովի հետ:

ՆԱԳՈՒԻԼՆՈՎ. Գրողը տանի, հավի խրտվիլակ:

ԴԱՎԻԴՈՎ. Ի գեպ, հավերի մասին: Վրիպեցինք մենք հավերի գործում, Նագուլով:

ՆԱԳՈՒԻԼՆՈՎ. Այդ ինչպես:

ԴԱՎԻԴՈՎ. Մենք գեռ սերմացու չենք պատրաստել, բայց թոշունները միացրինք: Եղանակ ել հիմարություն: Յես, Մակար, լուրջ առաջարկում եմ—անիծյալ թոշունների գործում մենք քաղաքական սիամ վործեցինք: Փաստ ե: Յես վոր տեղը լինեյի, բայց կիյան համարձակությամբ կընդունեյի սիամ և կհրամայեյի վերադարձնել հավերն ու մյուս թոշուններն իրենց տերերին: (Գալիս են Ասամանչուկովը յեվ Բաննիկը) Իսկ յեթի չես անի, յես կանեմ իմ պատասխանատվությամբ: (Գնում ե):

ՆԱԳՈՒԻԼՆՈՎ. Գնանք:

Ուզում են գնալ: Քմծիծաղով նրանց ե մոտենում Ատաման և շուկովը:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Քանդում եք, նշանակում ե, հավային կոլողը:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. ՑՐՎԵցեք: Քանդվում ե:

ԲԱՆՆԻԿ. Ինչպես յերկում ե, հավերի գիտակցությունը չի

հասել կոլխոզի:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Ասա տեսնեմ, թանկագին ընկեր, սոցիալիզմի ժամանակ աքաղաղները կովելու յին, թե չեն կովելու:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Դու... Կատակ արա, բայց իմացիր ինչ կատակ կարելի յե... Սոցիալիզմի համար մարդկության լավագույն մասն ե զոհ գնացել: Իսկ դու, գարչելի, ծաղրում ես նրանց: Հեռացեր անմիջապես այստեղից, հակա, թե չե ենպես կհասցնեմ քիթ ու մոռւթիղ, վոր մյուս աշխարհն կգնաս: (Քում ե նրանց) Կորի, քանի դեռ ննջեցյալ չեմ դարձրել քեզ: Յես ել կատակ անել դիտեմ:

ԱՏԱՄԱՆՉՈՎ. (Յետ ե պահում նրան) Մակար: Նորից:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Ի՞նչպես կարելի յե, Անդրյուշկա: Սոցիալիզմի համար մարդկության լավագույն մասն ե զոհվել, իսկ այդ ապահուածությունը ծաղրում ե:

Վ. Ա. Բ. Ա. Գ. Ո. Ւ. Յ. Բ.

ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՏԱՅԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Վարչության գրասեհնյակը

Գալիս են նազունովը, Ատամանչուկովը յեկ
Ալվան կը նը:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Հացահատիկ չտալ, հակախորհրդային պըռպատճակը զբանական գրադպել: (Ատամանչուկով) Ինչու նախանցյալ որը չեյիր յեկել, յերբ բրիգադը կանչել եր:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Անտառ եյի գնացել փայտի:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Իսկ յերեկ:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Խոտ եյի կրում:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Իսկ այսոր հանձննեցիր:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Վոչ...

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Ինչու:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Ցորեն չկա:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Ինչպես թե չկա:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Այնպես վոր, շատ պարզ: Մտածում եյի պահել սերմացու, հետո ավելցուկը հանձնեցի հացամթերւան,

ինձ այսու բան չմնաց, դրա համար ել կերանք:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Ուրեմն դու այս տարի ցանք չես ուզում անել:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Ուզում եյի, բայց ցանելու բան չունեմ:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. (Ալվանչովին) Իսկ դու ինչպես:

ԱԽՎԱՏԿԻՆ. Ցորեն մնացել եր, խոսք չունեմ, բայց տնտեսության մեջ, ընկեր, դու իմանում ես ինչպես ե, ելի: Մենք սու

վոր ենք հացն առանց կշռելու ուտել: Առանց չափի: Ինձ ամեն
մեկ անձին թողել եյին ամսական մեկ փութ, իսկ յես, որինակ,
որեկան յերեք-չորս գրվանքա հաց եմ ուտում: Ահա այդ պատ-
ճառով ել գերածախս ե յեղելը ջորեն չկա, ուզում ես, խուզարկիր:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. Իսկ սա ի՞նչ ե: (Ցույց ե տալիս հայամբերման
ցուցակները) Չեզ եմ հարցնում, սա ի՞նչ ե: Դու ասում ես, զոր
հացամթերումը հանձնել ես, իսկ քեզ վրա ապառիկ կա: Իսկ դու
ամենին չես հանձնել: Ինչո՞ւ Ռազմյունովը, Լյուբիշկինը, Դմիտրի
Մոլչունը, դարբին Շալին առաջին որը հենց ցորենը հանձնել են,
իսկ դուք չեք կարող: Որը ցերեկով խարսմ եք: Հացը թագց-
նում եք: Ուրեմն յես ել ձեզ կթագցնեմ: (Բաց ե անում դուռը)
Ծակը, ծակը մտեք: (Ախվատինը յեվ Ատամանչուկովն անցնում են
կից սենյակը) Մարդկության թշնամիներ: Յես ձեզ ցնույց կտամ
ինչ ե նշանակում խորհրդային գործերի վրա ծիծաղել: (Փակամ
և դուռը երանց լետիքը: Մուտքի դուռը ծեծում են, մտնում ե
Քանինիկը) Նստիր, Գրիգորի Մատվեևիչ:

ԲԱՆՆԻԿ. Շնորհակալություն արած պատվի համար:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. Գրիգորի Մատվեևիչ, այդ ի՞նչո՞ւ սերմացուն չես
հանձնում:

ԲԱՆՆԻԿ. Իսկ ի՞նչո՞ւ հանձնեմ:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. Չե վոր ընդհանուր ժողովը վորոշեց թե մենա-
տնտեսները, թե կոլլոգականները սերմացուն հանձնեն պահեստ
Դու սերմացու ունես չե:

ԲԱՆՆԻԿ. Հապա ի՞նչպես, իհարկե ունեմ:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. (Նայում ե ցուցակում) Դու այս տարի պատ-
րաստվում ես ութը հեկտար ցանել:

ԲԱՆՆԻԿ. Այդպես ե:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. Նշանակում ե քառասուն յերկու փութ սերմացու
ունես:

ԲԱՆՆԻԿ. Բոլորը լրիվ ունեմ, մաքրած ու ընտրած ցորեն,
վոսկու նման:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. Դու իսկական ես: Վաղը հանձնիր հասա-
րակական պահեստ: Կարող ես քո տոպրակներով թողնել: Մենք
մենատնտեսներից նույնիսկ իրենց տոպրակներով ենք ընդունում,
յեթե չես ուզում ցորենը խառնել: Կրերես, կշեռքով հանձնես,
զուռոփի կնիք կդնեն տոպրակների վրա, քեզ սուացական կտան,
իսկ գարնանը լրիվ յետ կտանաս: Թե չե, շատերը գանգատվում
են, զոր չեն կարողացել պահել, կերել են: Իսկ պահեստում ապա-

չով կլինի: (Սեղմաւմ ե Բաննիկի ձեռքը, ասում ե հանգիս) Դէ,
այդպես:

ԲԱՆՆԻԿ. Այդպես: (Սեղմաւմ ե նրա ձեռքը) Իսկ ցորենը, այ-
նուամենայնիվ, յես ձեզ չեմ տա:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. Ինչո՞ւ, թույլ տուր հարցներ:

ԲԱՆՆԻԿ. Վորովհետեւ ինձ մոտ ավելի ապահով կլինի: Իսկ
յեթե ձեզ հանձնեմ, գարնանը դատարկ տոպրակներն ել չեմ ստա-
նա: Մենք սույնպես այժմ խրատված ենք: Մեզ խաբել չես
կարող:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. Ի՞նչպես կարող ես կասկածել խորհրդային իշ-
խանության վրա: Չես հավատում, նշանակում ե:

ԲԱՆՆԻԿ. Այո, չեմ հավատում: Ցորենը հավաքեք, իսկ հետո
կլցնեք նավերն ու հայդա, ոտար յերկրներ կտանեք: Ավտոմո-
բիլ առնելու: Վորպեսզի կուսակցականներն իրենց մազը կտրած
կանանց հետ զբոսնեն: Խմանում ենք թե ինչի վրա յեք ծախսում
մեր ցորենը: Հասանք հավասարության:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. Խելքդ թոցըթել ես: Այդ ի՞նչե՞ր ես դուրս տալիս:

ԲԱՆՆԻԿ. Մարդ խելքն ել կթոցնի, յերբ կոկորդից բռնեն:
Հարյուր տասնվեց փութ հանձնել եմ հացամթերում, իսկ դուք
վերջին սերմացուն եք ուզում խելք:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. Զայնդ... Դուրս ես տալիս ավելորդ (Ձեռքը
խփում ե սեղանին):

ԲԱՆՆԻԿ. Դու ինձ վրա մի գոռա: Դու քո կնոջը բռունցքով
խփիր, իսկ յես քո կինը չեմ: Այժմ քսան թվականը չի, հասկա-
ցմար՝ իսկ ցորենը տվողը չեմ, քաշի:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. Դու այդ... Այդ ում խոսքերն են: Դու այդ ի՞ն-
չե՞ր ես ասում, հակա: Անմիջապես ստորագրություն գրիր, զոր
վաղը սերմացուն կհանձնես և վաղն և յեթ կզնաս, ուր վոր հար-
կավոր ե: Այստեղ կպարզեն, թե դու վորտեղից ես այդպիսի
խոսքեր իմացել:

ԲԱՆՆԻԿ. Դու ինձ կարող ես ձերբակալել, բայց ստորագրու-
թյուն և ցորեն չեմ տա:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. Գրիր, ասում եմ:

ԲԱՆՆԻԿ. Մի քիչ համբերիր:

ՆԱԴՈՒԼԵՆՈՎ. Յես քեզ խաթրով ինդրում եմ:

ԲԱՆՆԻԿ. (Գնում ե դեպի դուռը) Չեմ տա: Հենց հիմի գնում
եմ ցորենը խոզերի առաջը լցնում: Ավելի լավ ե թող խոզերն
ուտեն, քան ձեզ նման ձրիակերները:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Սերմացուն խոզերին տաս: (Գրպանից հանում են նազանը, կորով խփում ե Բաննիկին, նա վայր է ընկնում) Դրիբ:

ԲԱՆՆԻԿ. (Վեր ե կենում, մոտենում ե սեղանին) Դրելը կդրեմ, բայց այս մասին հայտնի կլինի դատախաղին: Նազանի սպառնալիքի տակ ինչ ուզում ես, կդրեմ: Խորհրդային իշխանության ժամանակ ծեծելն արգելված ե: Կուսակցությունը քեզ դրա համար պատասխանատվության կկանչի:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Ահա, հակա, խորհրդային իշխանությունն ու կուսակցությունը հիշեցիր: (Բղավում ե) Դրիբ. «Ստորագրություննես, նախին ակտիվ սպիտակ գվարդիական, մամոնտովցի, գենքը ձեռքիս Կարմիր բանակի դեմ հանդես յեկած, յետ եմ վերցնում իմ ասած խոռքերը: Իմ խոռքերը, խիստ վերագորական ՀԿԿ(ր) և խորհրդային իշխանության համար... — ՀԿԿ(ր) պլիստառով գրիր, և պարտավորվում եմ, թեպետ և յես թագնված հակա յեմ...»

ԲԱՆՆԻԿ. Չեմ գրի... (Նետում ե մատիսը):

ՆԱԳՈՒԽՆՈՎ. (Բղավում ե) ԶԵ, կդրես: (Բաննիկը գրում ե) «...այս պարտավորվում եմ վաղը, մարտի յերեքին, հասարակական շտեմարան հանճնել քառասուն յերկու փութ սերմացու ցորենու վոր և ստորագրում եմ»: Ստորագրիր, գնա:

ԲԱՆՆԻԿ. Այս արարքիդ համար պատասխան կտաս, Մակար Նազուլնով: (Փախչում ե):

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Մեզանից ամեն մեկն իր արարքի համար պատասխանատու յե: Համաշխարհային հեղափոխության համար յես քառասուն մահ կը նդունեմ: (Հոգնած, գլուխը թեքում ե սեղանին ու քնում):

Մընում ե: Յերր լույս ե տրվում — նույն թեմն ե, սեղանի մոտ բնել ե նազուլնովը: Մընում ե նազուլնովը:

ՈԱԶՄՅՈՏՆՈՎ. Անխելքի մեկը: Հիմարություններ ես արել, հիմի յել քնել ես: Ինչու յես ծեծել Բաննիկին: Նա լուսաղեմին սերմացուն բերեց և անմիջապես շրջան գնաց, քո դեմ միլիցիային գանգատ: Մինչև այդտեղ հասցըրի:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Ասում ես, այնուամենայնիվ, սերմացուն բերեց: Նու, նշանակում ե ազդել ե: Քառասուն յերկու փութ սերմացու, հանաք՝ մատխարություն չի: Յեթե ամեն մի հակայից նազանով մեկ անգամ խփելով քառասուն յերկու փութ ցորեն դուրս գա, յես իմ ամբողջ կյանքում, Անդրյուխա, միայն սրան-նրան խփելով կդրադվեմ:

Դուռը ծեծելու այն ե լսվում:

ՈԱԶՄՅՈՏՆՈՎ. Սա ի՞նչ ե:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Բոլորովին մոռացել եյի: Յես ախր այնուեղ հացը չարամտորեն թազցնող մանր բուրժուաներ եմ փակեր: Բաց թող նրանց և ասա... վոր կվերադառնամ ու կրկին նրանց այնտեղ կփակեմ:

ՈԱԶՄՅՈՏՆՈՎ. (Բաց ե անում դուռը) Կուզմա Միտրիչ, ի՞նչ ե պատահել: Այդ նազուլնովը...

ԱԽՎԱՑԻԿԻՆ. Դե, ինչ ասենք, ընկեր Ռազմյոտնով, այնտեղ, քո լրագրերի վրա քնած, մենք հասկացանք, վոր մեղավոր ենք, խոսք չունենք, բաց թող, անմիջապես կրերենք:

ԱՏԱՄԱՆՆՉՈՒԿՈՎ. Մեղքներս ինչ թազցնենք, ուզում եյինք ցորենը պահել:

Արագ գնում են: Գալրս ե Գավի ի դուկը:

ԴԱՎԻԴՈՎ. Այդ ի՞նչ նորություններ են, նազուլնով: Այդ ի՞նչ ես արել Գրիգորի Բաննիկին:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Դե վոր լսել ես, ել ինչ ես հոդի հանում:

ԴԱՎԻԴՈՎ. Այդ մեթոդներով ես դու ազիտացիա անում սերմացու հավաքելու համար: Բաննիկը քեզ վրա բողոքել ե զատամացու հավաքելու համար: Փաստ ե: Դու կոմունիստ ես, բայց ժանդարմի նման ես իսպիրու: Վարվում:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Յես իրավացի յեմ ծեծել նրան: Նույնիսկ չեմ ծեծել, այլ միայն մեկ անգամ եմ խփել, այնինչ ավելի յեր հարծագոր: Շուն շան վորդուն քիչ ուտացըրի իշխանությանը հայկավոր: Հոյելու համար:

ԴԱՎԻԴՈՎ. Մակար, դու հին պարտիզանական մեթոդներով աշխատում: Իսկ այժմ նոր ժամանակ ե, այժմ վոչ թե հանս աշխատում: Այլ պազիցիոն կոխվ ե: Փաստ ե: Ճիշտ կարծակի հարձակումներ, այլ պազիցիոն կոխվ ե: Փաստ ե: Ճիշտ կարծակին ե գրված ընկեր Ստալինի հոդվածը: Վոչ թե քո ժամանակին, այլ իսկական աչքին ե դիպել:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Ասում ես, վոր այդ հոդվածը վոչ թե իմ հոնքին, այլ աչքին ե դիպել: Վոչ թե աչքին, այլ իմ սրտին ե դիպել կու և ծակելով դուրս ե յեկել: Դա ի՞նչ հոդված պել և ծակելով դուրս ե յեկել: Դա ի՞նչ հոդված պել ե դա: Այնպիսի հոդված ե, վոր մեր ընկեր Ստալինն ե գրել իսկ ե դա: Մակար Նազուլնովս պառկել եմ զեմքս ցելափ մեջ թաղած, յես, Մակար Նազուլնովս պառկել եմ զեմքս ցելափ մեջ թաղած, յես անանապարհ կորցրած: Իսկ չե վոր յես իմ թափած արյունով անանապարհ կորցրած: Եթե կուսակցության հետ:

ԴԱՎԻԴՈՎ. Դու ըստ եյության իսուիր, Մակար: Ի՞նչ ես Տրոցկու նման շարունակ կը նում: «Յես կուսակցության մեջ եմ, յես կուսակցական եմ»:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Ով ինձ Տրոցկի յե անվանում, յես նրա դունչը կփշեմ: Զարչարվեցինք, կոլխոզ ստեղծեցինք, բայց ահա հոգվածը նահանջի փող և փչում: Յես եսկաղըոն եմ առաջնորդել լինացիների դեմ, Վրանգելի դեմ, և գիտեմ, մեկ վոր հարձակման դիմեցիր, կես ճանապարհից յետ մի դարձիր այլեւ:

ԴԱՎԻԴՈՎ. Ընկեր Ստալինի նամակը կե-ի դիճն ե, այնպես վոր դու նամակի հետ համաձայն չեմ:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Վոչ:

ԴԱՎԻԴՈՎ. Իսկ քո սխալներն ընդունում ես:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Ընդունում եմ:

ԴԱՎԻԴՈՎ. Ել բանն ինչո՞ւն ե:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Հողվածը ձիշտ չե:

ԴԱՎԻԴՈՎ. Դու ապնուշ ես: Գրիդը տանի: Այդպիսի խոսքերի համար ուրիշ տեղ քեզ կուսակցությունից դուրս կշըրտելին: Խելքդ թոցքը ես: Կամ դու անմիջապես վերջ կտաս քո այդ աղիտացիային կամ յես կհաղորդեմ շրջկոմ, վոր դու կուսակցության գծին դեմ ես գնում:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Հայտնիր: Յես ինքս կհայտնիմ շրջկոմ: Բաննիկի և բոլորի համար պատասխան կտամ: (Հեռանում ե):

ՏԱՄՆՄԵՍԵՐՈՐԴԻ ՊԱՏԿԵՐ

Թ-րդ պատկերի բեմը:

Մի խումբ կազակներ կարդում են Ստալինի «Հաջողություններից գիտապույտ» Խոդվածը: Գալիս և Պոլովցին:

ՊՈԼՈՎՑԵՎ. Դե, պարոնայք կազակներ, Դոնի ազատագրման միության անդամներ, վերջանում ե մեր ստրկության ժամանակը: Հասել ե ապստամբվելու ժամը: Մեր ուազմական կազմակերպությունը կազմ պատրաստ ե, և այս գիշեր, առաջին կրակոցը լսելուն պես, դուք պետք ե հարձակվեք և ձերբակալեք բոլոր կոմունիստներին իրենց աներում: Վոչ մեկը կենդանի չչկետք ե ազատվի: Չեր խմբի հրամանատարությունը հանձնում եմ պողխորունժի Մարինային: Չեր կոմունիստներին վերջացնելուց հետո... (աղմուկ) Ի՞նչ ե պատահել, այդ ի՞նչ խոսակցություններ են:

ԾԵՐ ԿԱԶԱԿԻ. (Ընդհանում և Պոլովցինին) Դուք, ձերդ բարեծնություն, պարոն յեսառւ, չի՞ք լսել նոր լրագրի մասին: Այսեղ, մինչեւ ձեր գալը, մենք խորհուրդ արեցինք: Շատ հետաքր-

քիր լրագիր ե ստացվել Մոսկվայից: Յեվ այստեղ տպված ե ընկեր Ստալինի նամակը: Կարդացինք մենք այդ նամակը և այնպես ե դուրս գալիս, վոր այդ լրագիրը մեզ բաժանում ե ձեզանից: Մեղ համար, այսինքն հողագործներիս համար ուրիշ գիծ ե դուրս գալիս... Յեվ ահա մենք բոլորս...

ՊՈԼՈՎՑԵՎ. Պապի, պառագություննից հո չես ցնորվել: Ո՞վ ե քեզ թույլ տվել խոսել բոլորի անունից:

ԾԵՐԻԾԱՍԱՐԴԻ. ԿԱԶԱԿԻ. Դուք, ընկեր նախկին սպա, մեր ծերունիների վրա մի գոռացեք: Դուք նրանց վրա հին ժամանակ առանց այն ել շատ եք գոռացել աղայություն եք արեր բավկան ե:

ԾԵՐ ԿԱԶԱԿԻ. Խորհուրդ արեցինք միմիանց հետ և վորշեցինք մենք «Պրավդա» լրագրում տպված այդ հոգվածի պատճառով, չապստամբվել: Մեր ճանապարհները բաժանվեցին իրարից:

ՊՈԼՈՎՑԵՎ. Դա ի՞նչ ե նշանակում, կազակներ, դավաճանություն:

ԾԵՐ ԿԱԶԱԿԻ. Այդ արդեն, ինչպես կամենաք, միայն թե մեր ճանապարհները մեկ լինել չեն կարող: Մենք խորհրդային իշխանության գեմ չենք, այլ գեմ ենք մեր տեղական իշխանության, դյուզի իշխանության, անկարգություններ յեղան... Իսկ մեկ վոր այս հոգվածը...

ԾԵՐԻԾԱՍԱՐԴԻ. ԿԱԶԱԿԻ. Վերադարձեք մեր ստորագրությունները, քանի խաթրով խնդրում ենք:

ԿԱԶԱԿԻ. Սխալվեցինք մենք ձեզ հետ: Դուք ասում եյիք, վոր ապստամբության գեալքում դաշնակիցները մեզ ակնթարթապես զենք և ուզմամբերք կրերեն: Զենքը նըանք կրերեն, բայց իրենք մեր յերկիրը կմտնեն: Բարեհանեցեք մեր ստորագրությունները վերադարձնել: Այդպես հրամայեցին ասել նաև Տուբյանսկի ծերունիները:

ՊՈԼՈՎՑԵՎ. Նշանակում ե Տուբյանսկում նույնպես:

ԾԵՐ ԿԱԶԱԿԻ. Բոլորը միաբերան:

ՊՈԼՈՎՑԵՎ. Այդպես: Դե, ինչ արած, պարոնայք կազակներ: Զեր ուզում մեզ հետ գալ, չենք խնդրում, չենք աղերսում: Իսկ ստորագրությունները ձեզ վերադարձնել չեմ կարող: Նրանք գտնվում են շտաբում: Բայց դուք իրուր եք վախենում: Զեր վոր յես գեղեղի չեմ գնա հայտնելու ձեր մասին:

ԾԵՐ ԿԱԶԱԿԻ. Այդ այդպես ե, բայց...

ՊՈՂՈՎՅՑԵՎ. Յեկ դուք վոչ թե ԳԵՂԵՌԻՒԹԵՍ, այլ մեզանից պէտք ե վախենաք: Մենք ձեզ կզնդակահարենք վոչպես միասարաւների: Հապա, յետ քաշվեցեք, ճանապարհ տվեք (Ճանում ե նազանը, փախչում ե):

Կազակները յետ են չաշվում:

Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո Ւ Յ Ր

ՏԱՄՆԵՐԿՈՒՅԹԵՐՈՐԴԻ ՊԱՏԿԵՐ

ԾՐԸՆՈՒՄՈՒՄ:

Կ Ո Ր Հ Ժ Բ Ա Կ Ի, Ս Ա Մ Ո Խ Ի Ա, Բ Ա Լ Ա Ր Ի Ա, Խ Ա Մ Ո Ւ Տ Ո Վ
յեկ Ն ա գ ո ւ լ ն ո վ :

ՍԱՄՈՒԻՆ. Շրջկոմի և վերահակիչ հանձնաժողովի հանձնարարությամբ յես քննեցի նագուլնովի գործը: Նագուլնովին, նրա հարցաքննելու միջոցով, այլև վկաների ցուցմունքներին վրա յես պարզեցի հետևյալը. ընկեր նագուլնովը կուեկտիվացման մոմենտին, փետրվար ամսին, տնետուն ընկած, նազանով սպառ ինչպես առում են, նա «ներգրավել ե» կոլլուզ յոթը չքաֆոր: Այդ ժամանակ նա ուշաթափելու աստիճան նազանով ծեծել ե մի միսերմացուն: Նույն այն գիշեր նա, պրիստավի նման, ձերբակալել յերկու կոլտնտեսականի և փակել ե նրանց ամբողջ գիշեր, ըստ սերմացուն:

ՆԱԳՈՒԻՆՈՎ. Նրանց յեմ չեմ սպառնացել:

ՍԱՄՈՒԻՆ. Յես այդ առում եմ նրանց ասելով ընկեր նանովը, և խնդրում եմ ինձ չընդունովի վրանից, նագուլ կարելու չե կուսակցության անդամի բնութագորի համար: Նագուլ կարել տանից և միայն այն պատճառով, վոր կինը, իբրև թե սիրուային կապ ե ունեցել զյուղում մի յերիտասարդի հետ: Թե նա կուսային ինչպիսի կյանք ե վարում այժմ, յես չգիտեմ, բայց

բոլոր տվյալները վկայում են, վոր նա ուղղակի ցոփ կյանք ե վարում: Ահա, ընկերներ, այն հերոսական արարքների համառոտ նկարագրությունը, վոր կարճ ժամանակամիջոցում կարողացել ե կատարել բջիջի քարտուղար նագուլնովը: Վորմնաք են այդ հանկարարել արմատները: Պետք ե ուղղակի ասել, վոր ցագործությունների արմատները: Պետք ե հաջողությունների գլխապատճյուղ են, ինչպես տարանք վոչ թե հաջողությունների մեր առաջնորդ ընկեր Ստադանգավոր կերպով արտահայտել ե մեր առաջնորդ ընկեր, այլ գա ուղղակի ձախություն ե, հարձակում ե կուսակցինը, այլ գա ուղղակի գծի գեմ: Շրջանային վերահսկիչ հանձնաժողության գլխավոր գծի գեմ: Վերաբերմամբ: Յես վերջացրի: Կիանի նագուլնովի վերաբերմամբ: Յես վերջացրի:

ԿՈՐՉՁԻՆՍԿԻ. Խոսքը տանը ընկեր նագուլնովին, թող նապատմի ինչպես ե հասել այդորինակ կյանքի: Խոսիր, ընկեր նապատմի ինչպես տանը կունով:

ՆԱԳՈՒԻՆՈՎ. Յես, ընկերներ, հեղափոխությունից սկսած, կուսակցության մեջ եմ, Յեղել եմ կարմիր բանակում...

ԿՈՐՉՁԻՆՍԿԻ. Այդ բոլորը մեզ հայտնի յե, գործի մասին խոսիր:

ՆԱԳՈՒԻՆՈՎ. Յես բոլոր ճակատներում կովել եմ սպիտակ սերի գեմ... Յեկ առաջին հեծյալ գնդից ինձ որդեն են տվել...

ԽՈՄՈՒԾՈՎ. Դու գործի մասին ասա:

ՆԱԳՈՒԻՆՈՎ. Իսկ գա գործ չե:

ԽՈՄՈՒԾՈՎ. Դու պոչ թափ մի առուր, նագուլնով: Արժանիք-ների վրա հենվելու այժմ հարկ չկա:

ԲԱԼԱԲԱՆԻՆ. Ընկերներ, թողեք խոսի, ինչ եք վրա տալիս:

ԿՈՐՉՁԻՆՍԿԻ. Խոսիր կոնկրետ, նագուլնով:

ՆԱԳՈՒԻՆՈՎ. Թողեք խոսեմ, ընկերներ, յես հո թշնամի չեմ: Ինչու յեք ինձ հետ այդպես վարվում: Յես բանակում վիրավորվել եմ հետ այդպես վարվում: Յես բանակում հանր հրա-վել եմ... կոստորնայի տակ կոնտուզյա յեմ ստացել ծանր հրա-վոթից...

ԲԱԼԱԲԱՆԻՆ. Դու մի հուզվիր, խոսիր:

ՆԱԳՈՒԻՆՈՎ. Յես ընդունում եմ այն, ինչ ասաց Սամոխինը: Ճշմարիտ ե, դա յես արել եմ: Բայց վոչ թե այն պատճառով, վոր կամեցել եմ կուսակցության վրա հարձակում գործել, այդ արդեն Սամոխինը գլխից դուրս ե տալիս: Շան նման վշում ե նաև իմ ցոփ կյանքի մասին: Յես կանանցից փախուստ եմ տալիս և նրանցով զբաղվելու ժամանակ չունեմ:

ՍԱՄՈՒԹԻՆ. Այդ պատճառով ես կնոջդ վրնդել:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Այս, այդ իսկ պատճառով: Իսկ Բաննիկին ծեծել եմ այն պատճառով, վոր նա ծաղրել ե կուսակցությունը և սերմացուն ուղում եր խողերին տար:

ՍԱՄՈՒԹԻՆ. Ասա, ասա:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Ասում ես, ինչ յեղել եւ նույնիսկ ափսոսում եմ, վոր Բաննիկին չեմ սպանել: Ուրիշ ասելիք չունեմ:

ԿՈՐՉՁԻՆՍԿԻՆ. Դուրս գնա, Նազուլնով: (Նազուլնովը զնում է) Դե, ընկերներ, ինչ կասեք: Ամեն ինչ պարզ ե: Ինքը Նազուլնովը խոստովանեց: Թեպետ մանր բաներում նա աշխատում է պոչ թափ տալ, բայց յես կարծում եմ, վոր Նազուլնովին, վորպես կոլտնտեսական շարժման մեջ կուսակցության գիծը չարամտորեն խախտողի, վորպես կենցաղային հարցերում այլասերված կոմունիստի, հարկավոր ե կուսակցության շարքերից վարել: Մենք չպետք ենայնք Նազուլնովին նախկին արժանիքների վրա: Դա անցյալ ետապ ե: Մենք պետք ե, վորպես որինակ ուրիշների համար, նրան պատժենք: Բոլոր նրանց, ովքեր փորձ կանեն անվանարկել կուսակցությունը և նրան քարշ տալ աջ կամ ձախ, մենք հարցածենք անխնա: Քիեարակենք: Ո՞վ ե կողմանկից, վորպեսզի Նազուլնովին վտարենք կուսակցությունից: Մեծամասնությունը: Դու դեմ ես, ընկեր Բալաբանին:

ԲԱԼԱԲԱՆԻՆ. Յնս վոչ միայն դեմ եմ, այլ վճռականապես բռնքում եմ: Դա արմատապես սխալ վորոշում ե:

ԿՈՐՉՁԻՆՍԿԻ. Դու կարող ես մնալ քո ուրույն կարծիքին:

ԲԱԼԱԲԱՆԻՆ. Վաչ, դու թույլ տուր ինձ ասել:

ԿՈՐՉՁԻՆՍԿԻ. Ուշ ե արդեն, Բալաբանին, Նազուլնովին հեռացնելու վորոշումն ընդունված ե ձայների մեծամասնությամբ:

ԲԱԼԱԲԱՆԻՆ. Դա չինովնիկական մոտեցում ե մարդուն: Ներեցեք, ընկեր, յես այդ բանն այդպես չեմ թողնի: Յես կգրեմ Յենտրոն, Վատարել կուսակցության հին անդամին, կարմիր գրոշի շքանշան ունեցողին... Դուք բթացել եք, ընկերներ: Կարծիք պատժի ուրիշ միջոց չկա:

ԽՈՄՈՒԾՈՎ. Կարիք չկա այդ մասին դիսկուսիա սկսել: Զե վոր քվեարկեցինք:

ԲԱԼԱԲԱՆԻՆ. Այդպիսի քվեարկության համար հարկավոր ե դունչներդ փշել:

ՍԱՄՈՒԹԻՆ. Դունչ փշելու մասին զգույշ խոսիր: Այստեղ

շրջում ե:

ԲԱԼԱԲԱՆԻՆ. Առանց քո ասելու գիտեմ: Ինչու թույլ չեք տալիս խոսեմ:

ԿՈՐՉՁԻՆՍԿԻ. Վորովհետեւ յես դա ավելորդ եմ համարում: Յես շրջումի քարտուղարն եմ: Յես քեզ զրկում եմ ձայնից: Իսկ յեթե խոսել ես ուղում, գնա պաշտամբում խոսիր: Ընկեր Սամիխն, կանչիր Նազուլնովին:

ՍԱՄՈՒԹԻՆ. (Բաց ե անում դուռը) Ընկեր Նազուլնով:

Մտնում ե Նազուլնովը:

ԲԱԼԱԲԱՆԻՆ. (Անցնելով Նազուլնովի կողման) Դիմիր կենտրոն: ՍԱՄՈՒԹԻՆ. Բյուրոյի վորոշումով դու վտարվում ես մեր շարքերից: Կուսառմագ հանձնիր:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Կուսառմագ չեմ տա:

ԿՈՐՉՁԻՆՍԿԻ. Կհարկագրենք, վոր տաս:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Կուսառմագ յես քեզ չեմ տա: Յեզ կուսակցությանը յես գեռ հարկավոր կինեմ: Յեզ յես առանց կուսակցությանը յես գեռ հարկավոր ապրել: (Դոչում ե) Յես քեզ չեմ յենթարկվում, հասկանալի՞ յե:

ԿՈՐՉՁԻՆՍԿԻ. Սկսվում ե վորբերգական գործողությունը: Առանց իստերիկաների, Նազուլնով:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Ինչի՞ յեմ պետք յես առանց կուսակցության: Յեզ ինչու... Վոչ, կուսառմագ յես չեմ տա: Յես իմ վողջ կյանքն եմ դրել: Վողջ կյանքը... Յեթե այնպես ե, ավելի լավ ե հրամայիր տղաներին ինձ... Վերջ տան... Ինձ համար կյանքն այժմ բանի պետք չե, կյանքից վտարեցեք ինձ:

ԿՈՐՉՁԻՆՍԿԻ. Բավական ե, գրանով ոգնել չես կարող:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. (Բդումում ե) Բնուությունն եք գործ դնում: Բաղցը խոսել եք սովորել: Ծիծաղնում եք իմ մահացու վշտի վրա:

ԿՈՐՉՁԻՆՍԿԻ. Բավական ե, Նազուլնով, մենք ուրիշ հարցեր ել ունենք:

ՆԱԳՈՒԽՆՈՎ. Բավական ե, բայց յես իմ արդարությունը կպտնեմ: Յես կե կդնամ... բայց արդարությունը (Դոչում ե յեկ կանգ պանում դրան մոտ) արդարությունն իմ հարազատ կուսակցության մոտ կգտնեմ... (Դուրս ե զնում դուռը բաց բողնելով):

ԿՈՐՉՁԻՆՍԿԻ. Իհարկե, ընկերներ, մեղք ե... Բայց մենք, հեղափոխության զինվորներս ընդհանրապես և ամբողջովին պետք ե...

ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Փողոց:

Նտած են Յարսկի խուռաքից յեկած մի Շեր յեվ մի Յերի -
տասաք կազմակէ Գալիս են Բաննիկը յեվ Ոստրով -
նովը:

ԲԱՆՆԻԿ. Ինչպես եք, քաղաքացի կաղակներ:

ԿԱԶԱԿ. Փառք աստուծո: Ծխախոտ չես ունենա: Թութունից
աղքատ ենք:

ԲԱՆՆԻԿ. Մի քիչ մատել ե: (Տալիս ե բուրունի քիսան) Ո՞խ,
բուրու չծխեք:

ԾԵՐ ԿԱԶԱԿ. Այժմ կոլխոզ ե, ամեն ինչ պետք ե ընդհանուր
լինի:

ԲԱՆՆԻԿ. «Ընդհանուր»: Իսկ դուք վո՞ր կողմիրից եք:
ԿԱԶԱԿ. Յարսկից:

ԲԱՆՆԻԿ. Մեզ մոտ ի՞նչ գործով եք յեկել:

ԿԱԶԱԿ. Սերմացուի:

ԲԱՆՆԻԿ. Ինչպես թե սերմացուի:

ԿԱԶԱԿ. Շրջանից հրամայեցին ձեզանից սերմացու վերցնենք —
չորս հարյուր յերեսուն փութ:

ԲԱՆՆԻԿ. Այդպես ել գիտեյի:

Հավաքվում են կանայք:

ՆԱՍՏԵՆԿԱ. Կեանիք, մեր ցորենը տանում են, ցանելու բան
չենք ունենալու:

ԿԱՏԵՐԻՆԱ. Վայ մեր խեղճ գլուխներին, սատանաներն են
ձեզ բերել:

ԲԱՆՆԻԿ. Ասում եյի չպետք ե հանձնել հասարակական շտե-
մարան:

ԿԱՏԵՐԻՆԱ. Հարկավոր ե գնալ կաղակներին ասել, վոր ցո-
րենը չտան:

ՆԱՍՏԵՆԿԱ. Մենք ինքներս ել չենք տա: Կեանիք, գնանք
շտեմարանների կողմը: Դականակներն առնենք, թույլ չտանք,
վոր բաց անեն:

Հավաքվում են կազմակերը: Գալիս ե Դավիդովը:

ԴԱՎԻԴՈՎ. Ի՞նչ ե պատահել քաղաքացիներ, ինչու յեք հա-
վաքիւ:

ԲԱՆՆԻԿ. Ինչու յեք մեր ցորենը ուրիշներին տալիս: Մենք
նրանց համար ենք ավել:

ԴԱՎԻԴՈՎ. Դա թյուրիմացություն ե, քաղաքացիներ: Ձեր
ցորենի մասին չե խոսքը, այլ հացամթերումից մեզ մոտ մնացած
ցորենի: Ահա և ըրջանային դաշտավարական միության նախա-
գահի գրությունը: Համաձայնեցրած ե նաև հացմիության հետ:

ԲԱՆՆԻԿ. Պատմիր, իմանում ենք մենք ձեր խորամանկու-
թյունները:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Իսկ մենք ի՞նչ ենք ցանելու:

Աղմուկ:

ԴԱՎԻԴՈՎ. Քաղաքացիներ, կրկնում եմ, վոր ցորենը բաց եմ
թողնում շրջաշտմիության կարգադրությամբ և այն ել վոչ թե
սերմացուն, այլ հացամթերումից մնացածը: Սերմացուն անձեռն-
միսելի յե և անձեռնմիսելի յել կմնա: Փաստ ե: Յեվ գուք, քա-
ղաքացիներ, մի անհանգուացեք, և փոխանակ այստեղ թրկ գալու
և արկածաղիկ չըթելու, դուք պետք ե դաշտում լինեք: Իմացած
յեղեք, վոր բրիգադիներն աշխատանքի դուրս չեկողների հաշվովը
պահում են: Պրոգուչիկներին կտուգանենք: (Հեռանում ե):

Աղմուկը վերսկավում ե: Յարցիները գնում են Դավիդովի
հետ:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Դեռ մեզ ել ուզում են տուգանել:

ԲԱՆՆԻԿ. Խաբում ե Դավիդովը, սերմացուն են տանում: Կոշ-
խողը կցանի, իսկ մենատնտեսների հանձնածը տալու յեն ուրիշ-
ներին: Զենք տալիս մեր ցորենը:

ԲՈԼՈՐԸ. ԶԵՆՔ տալիս: (Ցրվում են):

Յերեվում ե Ռազմական նովը, մյուս կողմից գալիս են
կանայք:

ՆԱՍՏԵՆԿԱ. Միախնդը հայտարարիր բացված, Ռազմականով:

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Յես դաշտից եմ գալիս, կնանիք, ի՞նչ միտինդի
ժամանակ ե: Հարկավոր ե ցանել և վոչ թե միտինդ անել: Ի՞նչ
միտինդ ե:

ՆԱՍՏԵՆԿԱ. Յորենի մասին խոսելու:

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Նու լավ, միտինդը հայտարարում եմ բացված:

ՆԱՍՏԵՆԿԱ. Խոսք եմ խնդրում: Ինչու յեք թույլ տալիս մեր
ցորենը տանեն: Ինչու յեք տալիս ուրիշներին:

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Ձեր ցորենը ուրիշներին չենք տալիս, կնանիք:

Նոր հանդիպեցի Յարցիներին, իզուր եք դուք նրանց ծեծել,

Նրանք ձեր ցորենը տանելու չեն յեկել:

ՆԱՍՏԵՆԿԱ. Պատմիր հեքյաթներդ: Դունչը վո՞նց ե տուղացրել:

ԱՄՎԱՏԿԻՆ. Կամիսար ե դարձել:

ՆԱՍՏԵՆԿԱ. Զմեռամառ սապոդներով և մանգալիս, իսկ մեզ համար ապրանք չկա:

ԿԱՏԵՐԻՆԱ. Հանեք նրա սապոդները, կնանիք,
ԲԱՆԻԿ. Հանեք սապոդները:

Կանայք յեկ կազակները հարձակվում են Ռազմական մասնակի վրա, նա հանում է ատրճանակը, բռնորդ սարսափահար փախչում են զանազան անձնութեաներ:

ՌԱԶՄՑՈՏՆՈՎ. Քաղաքացիներ, այսպես չի կարելի: Ինձ վրա ծիծաղել—նշանակում ե խորհրդային իշխանության վրա ծիծաղել: Առաջարկ նշուակում է յետեվից գաղտազգի մոտենալով, խփում յեկ վայր ե զցում նրա ձեռքից նազար:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Կրակել ե ուղում ժողովրդի վրա. այ քեզ շան վորդի:

ԲԱՆԻԿ. Տղերք, փակենք նրան պարզաբան և գնանք Դավիդովի մոտ—նրան ել մի քիչ թափ տանք, թող մեր ցորենը ցրիվ չտան:

Տանում են Ռազմական մասնակի նաև մասնակի վարպետներն ու գնանք Դավիդովի մոտ:

ՄԱՅԱՆՆԻԿՈՎ. Բանալիներն ինչ անեմ, ընկեր Դավիդովի նրանք կհարձակվեն մեզ վրա:

ԴԱՎԻԴՈՎ. Բանալիներն ինձ տուր: (Վերցնում ե բանալիներն ու դեռում կոչիի նաև) Ինքու անմիջապես վաղ տուր դաշտ, Լյուբեզինի բրիգադի մոտ: Թող անմիջապես ողնության հասնեն: Մայդան նիկ ու կու վը գնում ե: Գավիդ կու վը ծխում ե: Կրկն յերեվում են կազակները: Առջեվից գալիս են նաև կառաջ յեկ ուրիշ կանայք:

ՆԱՍՏԵՆԿԱ. Ահա գալիս ե մեր թշնամին:
Դավիդովի վը ծխում ե:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Արի, արի, հետո կծխես:

ԲԱՆԻԿ. Են աշխարհում կծխես: Բանալիները բերմաւ ես:

ՆԱՍՏԵՆԿԱ. Բերում ե, ինարկե: Դող—սիրտը դող:

ԲԱՆԻԿ. Բանալիները տուր:

ԴԱՎԻԴՈՎ. Այդ ինչ ե, քաղաքացիներ, չեք յենթարկվում խորհրդային իշխանության կարգադրություններին: Ինչո՞ւ դուք Յարսկի կոլխոզին ցորեն չափեցիք: Իսկ չեք մտածում, վոր ցանքի կամպանիան տապալելու համար դուք պատասխան կտաք գտառանի առաջ: Խորհրդային իշխանությունը ձեզ այդ բանը չի ների:

ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Քո խորհրդային իշխանությունը, քո Ռազմությունը ձերբակալված նստած ե պարզվալում:
Ծիծաղ:

ԲԱՆԻԿ. Խորհրդային իշխանությունն այդպես չի ասում, ինչպես դուք եք այստեղ հնարում: Մենք քո և Մակար Նագուլնովի հնարած խորհրդային իշխանությանը չենք յենթարկվում: Միթե սա գործ է, վորպեսզի հողագործին ցանելու հնարավորություն չափվի: Դա ինչ բան է: Դա կուսակցության աղավաղումն է: ԴԱՎԻԴՈՎ: Քեզ հնարավորություն չենք տալիս ցանելու, ի՞նչ է:

ԲԱՆԻԿ. Բաս չե, տալիս եք:
ԴԱՎԻԴՈՎ. Դու սերմացու հանձնել ես հասարակական շտեմարան:

ԲԱՆԻԿ. Հանձնել եմ:
ԴԱՎԻԴՈՎ. Յետ ստացել եմ:

ԲԱՆԻԿ. Ստացել եմ: Հետո ի՞նչ:
ԴԱՎԻԴՈՎ. Ել ով քեզ հնարավորություն չի տալիս ցանելու: Ի՞նչ ես թրե գալիս այստեղ, շտեմարանի շուրջը:

ԲԱՆԻԿ. Յես իմ մասին չեմ մտածում, այլ մտածում եմ այն մարդկանց մասին, ովքեր դուրս են յեկել կոլխոզից և վորոնց ցորենը դուք չեք վերադարձնում և կայըը չեք տալիս: Ահա ինչ: Ինձ ել ինչ հող եք տվել ինչո՞ւ այցափի հեռուները:

ԴԱՎԻԴՈՎ. Նշանակում ե քեզ պետք եր ամենալավ հողը տալի գորովհետեւ դու կոլխոզում չես: Գնա այստեղից: Թեզ հետ մենք հետո կիսունք: Փաստ ե: Իսկ կոլխոզի գործերի մեջ քիթ մի խոթիր: Թե չե մենք քո քիթը կկոտընք: Դու ժողովրդին մի զըրդ դոփր: Գնա, ասում եմ:

Կանայք հարձակվում են Գավիդովի վրա:
ՆԱՍՏԵՆԿԱ. Ինչ կարիք կա նրա հետ յերկարաբար խոսելու: Բանալիները տուր: (Սկսում ե խուզարկել: Դավիդովը քերել կրկնի հրում ե նրան) Ո՞, սպանեց, սպանեց: Սիրելիներս, մի թողնեք սպանի:

ԿԱՏԵՐԻՆԱ. Սա ինչ բան է, կնանիք: Նշանակում ե կորիզ են անում: Հապա, ենպես հասցըք, վոր քիթը ծուխը դուրս գա:

ՆԱՍՏԵՆԿԱ. (Կրկն վրա յե գնում, խուզարկում ե Գավիդովին) Բանալիները տուր: Բանալիները սրա մոտը չեն:

ԲԱՆԻԿ. Ո՞ւր են բանալիները:
ԱՏԱՄԱՆՉՈՒԿՈՎ. Տուր: Միենույն ե, կողպեքները կկոտընք:

ԿԱՏԵՐԻՆԱ. (Թիում և 'Կավիդովի դեմքին) **ԱՌ ՔԵԿ**, սատանի ծնունդ, անաստված: Կերաք, կուազաշտներ: Յեկեղեցիները փակեցիք:

ԴԱՎԻԴՈՎ. Բանալիներն ինձ մոտ չեն, քաղաքացիներ: Բանալիները պահպատմ են զրասենյակում բայց միայն թե, իմացեք, բանալիները յես ձեզ չեմ տա:

ՆԱՍՏԵՆԿԱ. Ինքներս կվերցնեք: Գնանք գրասենյակ:

ԴԱՎԻԴՈՎ. Թեև, բանալիները, յերեխ, ակմբում են: Մայդաննիկովք միշտ այնտեղ ե թողնում:

ՆԱՍՏԵՆԿԱ. Մայդաննիկովք փախել ե:

ԴԱՎԻԴՈՎ. Ի՞նչ անենք փախել ե, բանալիները կարող ե թողած լինել:

ԿԱՏԵՐԻՆԱ. Բաշ ավեք նրան գրասենյակ, կնանիք:

Թոլոք հարձակվում են Դավիդովի վրա, սկսում են ծեծել:

ԴԱՎԻԴՈՎ. Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, քաղաքացունիներ, մեկ ել, մեկ ել:

ՆԱՍՏԵՆԿԱ. Անզգա կուռք, սառը քարի կտոր ե, գեռ ծիծառում ե:

ԿԱՏԵՐԻՆԱ. Հիմի յես քեզ ցույց կտամ: (Թափով վրա բերելով, խփում ե գալազանով):

ԴԱՎԻԴՈՎ. Փայտով չխփել: Տատի, քո մեռնելու ժամանակն ե, բայց դու կոխվ ես անում, հապա յես քեզ մի հատ հասցնեմ:

ՆԱՏԵՆԿԱ. Բանալիները գտիր — կսպանենք:

Դավիդով մտնում ե գրասենյակ:

ՆԱՍՏԵՆԿԱ. Չեռքերս ցավեցին այնքան խփեցի, իսկ նրա համար՝ վոչինչ կարծես:

ԿԱՏԵՐԻՆԱ. Զփախչի, կնանիք:

Դավիդով յերեխում ե:

ԴԱՎԻԴՈՎ. Քաղաքացունիներ, զուք ինձ բոլորովին իզուր տեղը ծեծեցիք: Հիշեցի, բանալիները յես դրել եմ արխիվում, դարակի վրա:

ԿԱՏԵՐԻՆԱ. Ծիծաղմամ ես մեզ վրա, կուռք:

Կանայք նորից սկսում են ծեծել նրան: Դավիդով վրա և պրծում նրանց ձեռքից:

ԴԱՎԻԴՈՎ. Ձեզ համար, ձեզ նման սրիկաների համար ենք մենք աշխատում, իսկ դուք ուղում եք ինձ սպանել: Բանալիները չեմ տա, հասկանեմ եք, չեմ տա:

ԶԱՅՆ ԲԵՄԻ ՅԵՏԵՎԻՑ. Թողեք նրան, կազակները ցորենը բաժանում են:

Թոլոք վազում են թմբի յետի: Դավիդովը մնում է մենակ: Բեմ է զայխ սարսափից դողահար Շջուկար:

ՇԶՈՒԿԱՐ. Ընկեր Դավիդով, թագնվեցեք, իսեր աստուծութիւնչ շահ ունեք մահ: Ընդունելու: Խնչի համար — հայտնի չեմ: Լսում եք, ցորենը բաժանում են:

Դավիդովը փորձում է վազել, բայց յերերում ե:

ՇԶՈՒԿԱՐ. Ո՞ւր եք վազում, ընկեր Դավիդով:

ԴԱՎԻԴՈՎ. Բաց թող, պատի:

ՇԶՈՒԿԱՐ. Կապանն ձեզ, շունչ քաշելու ժամանակ չեն տա: Թաղմյոտնովին ել արդեն յերեկ վերջ են տվել: Ճորենի պատճառով ուղում եք կյանքից զրկվել:

ԴԱՎԻԴՈՎ. Բաց թող, (Գոչում ե) Քաղաքացիներ, վերջին անգամ ասում եմ ձեզ, խորհրդային իշխանությունը ձեզ չի ների այդ բանը:

Յերերում ե, ընկնում է այդ բովեյին կայտնութեակաների դուրս քերած կշեռի վրա: Ազմուկ: Ներս ե վազում Նազուլ նվազը:

ՆԱԳՈՒԿԱՆՈՎ. Ի՞նչ ե պատահել: Ո՞վ ե լիազորել ձեզ ցորենը կշռել: Վարչությունը թույլ տվել ե:

ԲԱՆՆԻԿ. Մենք ինքներս ենք հիմի վարչությունը:

ԱՏԱՄԱՆՆՉՈՒԿԱՆՈՎ. Ի՞նչ ես հրամայում: Քեզ կուսակցությունը հիմացիք են, մի ես դու հիմի:

ՆԱԳՈՒԿԱՆՈՎ. (Համում ե նազանը) Ցրվեցեք, յոթը գարշելի կուսանեմ, այն ժամանակ միայն շտեմարան կմտնեք: (Նկատում ե ծեծված Դավիդովին) ԱՌի, գարշելիներ, խորհրդային իշխանությունն եք ծաղրում:

Նետվում է դեպի Դավիդովը: Սյու ժամանակ Բաննի կ ը, գտնելից լիեվազ յերկարյա ձորք, նետում ե Նազուլ նու կ ի վատերին: Նազուլ նու կ ընկնում ե: Բեմի յետել բացականչություններ՝ «Մի ի ցի ա, մի ի ցի ա»: Զախ կողմից ներս են վազում լ, յու բի շի նը, Մայդան կ ի ո վ յեզ կուտնեսականեր: Նազուլ նու կ նու ուզում ե բարձրանալ, բայց չի կարողանու:

ԼՅՈՒԿԻՇԵԿԻՆ. Ո՞ւր ե Դավիդովը... Ի՞նչ ե պատահել քեզ, Մակար:

ՆԱԳՈՒԿԱՆՈՎ. Վոտքս վնասեցին: Թույլ չեմ տա խորհրդային իշխանությունը վոտնահարել, թույլ չեմ տա, գարշելիներ:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՏԱ.ՍՉՈՐԾԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Փողոց: Առավատ և Գարուն և:

Նագուլ նովը, Փաքաքված վասելով նոտած, անզիրեն լեզվի դասագիրք և կարդում վանկելով:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. «Կոմունիշեն... ռեվոլյուշեն... ոլուայտ...»

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Այդ ի՞նչ ես սովորում:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Անզիրեն:

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Ի՞նչ:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Անզիրեն խոսել: Սա անզիրեն լեզվի դասագիրք և:

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Յեվ կարողանում ես պարդար կամ խոսել նրանց լեզվով:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Զե, խոսել դեռ չեմ կարողանում: Միանգամբ չի լինի, բայց տպածն սկսում եմ հասկանալ:

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Դժվար ե:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Շատ դժվար ե: Այս ամբողջ ժամանակ միայն ութը բառ եմ սովորել:

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Բայց ի՞նչի՞դ ե հարկավոր անզիրեն լեզուն, Մակար:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Տարորինակ հարց ես տալիս, Անդրյուշա: Զար-

մանալ կարելի յե քո անհասկացողության վրա: Յես կոմունիստ եմ, այդպիս ե: Անզիրայում խորհրդային իշխանություն լինելու յե:

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Լինելու յե:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Դու վոր ասում ես լինելու յե, նշանակում ե կլինի: Իսկ մենք շատ կոմունիստներ ունենք, վորոնք անզիրեն խոսել են իմանում: Բանն ել նրանումն ե, վոր քիչ են: Իսկ անզիրական բութույները տիրել են Հնդկաստանին և համարյա աշխարհի կեսին և ճնշում են բոլոր սեամորթներին ու թիամորթներին: Դա ի՞նչ կարգ ե, հարց և առաջ գալիս: Այնտեղ խորհրդային իշխանություն կլինի և անզիրական կոմունիստներից շատերը չեն իմանա ինչ և նշանակում դասակարգային թշնամի և անսովոր լինելուց, չեն իմանա նրանց հետ ինչպիս վարվել: Իսկ յերբ յես նրանց լեզուն իմանամ, կդնամ և խկույն և յեթ կրացատրեմ՝ Ռեվոլյուշեն և ձեզանում, կոմունիշեն: Ուրեմն, տղերք, կապիտալիստներին ու գեներալներին հուպ տվեք, վորպեսզի ոլուայտ գուրս գա: Անզիրական բանվորի արյունն ես խմել—պատի մոտ կանգնիր, գարշելի:

Գալիս ե Գավիդովը:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Իսկ ի՞նչ ե պատահել: Տեսեք, վոնց և փայլում:

ԴԱՎԻԴՈՎ. Հապա ի՞նչպիս, Մակար, դեռ միայն մայիսի 15-ն ե, այնինչ ցանքը Գրեմյաչի լոգում արդեն վերջացել ե և ամբողջ պլանը կատարել ենք: Փաստ ե: Վաղահաս ցորեն ե, գորգի նման: Գալիս ե Օստրով Անվը:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Իսկ կուբանկան:

ԴԱՎԻԴՈՎ. Կուբանկայի բանը մի քիչ լավ չի: Այս էիմի յեթե մի անձը լիներ: Ամեն առավոտ դաշտ եմ գնում, նայում եմ—հողը չորացել ե, հատիկը նվազ ե, ծիլը թելի նման բարակ ե: Միկոնավոր հատիկ ենք թագել, նագուլով, համարյա հարյուր հեկտար:

ՌՍՏՐՈՎՆՈՎ. Յեվ չի յել ծլի: Վոչ մի կերպ չի ծլի: Ուշ ցանցիք: Ուրում եք տարին բոլոր ցանեք և հույս ունեք, վոր կծլի: Դա միայն զրքերի մեջ ե այլպիս զրված, վոր Յեղիպտոս սում տարեկան յերկու անգամ բերք են հավաքում: Իսկ Գրեմյաչի լոգը, ընկեր Դավիդով, Յեղիպտոս չի:

ԴԱՎԻԴՈՎ. Յակով Լուկիչ, զու ոպորտունիզմ ես առաջ բերում: Մեզանում պետք ե ծլի:

Օստրով Անվը, մեռք բաֆ տալով, ենանում ե:

ՌԱԶՄՅՈՏՆՈՎ. Հողը մերն ե և պետք ե մեզ լսի: Յեվ յեթե

հարկ լինի, յերկու անգամ բերք կհավաքենք: Այս, յեթե մի անձրէ լիներ: (Դուրս ե գնում նազուղնովի հետ):

Մտնում ե Ախ դատկինը, Եշուկարը յեվ յերկու պառակ կի՞ն:

ԾԶՈՒԿԱՐ. Ներս յեկեք, ծերունիներ... յես ասում եմ, Դավիթովն իմ բարեկամն ե, մենք իսկույն գործը վլուխ կրերենք: (Դավիդովին) Մենք խոնարհ խնդիրով ենք յեկել:

ԱԽՎԱՏԿԻՆ. Միք ծերունիները վորոշել են և մեզ ուղարկել ԴԱՎԻԴՈՎ. Ի՞նչ կա:

ԱԽՎԱՏԿԻՆ. Յերկորդ բրիգադի ցորենը, ինչպես յերկում ե, չի կանաչելու:

ԴԱՎԻԴՈՎ. Դեռ վոչինչ հայտնի չե, պապի:

ԱԽՎԱՏԿԻՆ. Հայտնի չե, բայց այդպես ե դուրս գալիս:

ԴԱՎԻԴՈՎ. Ուրեմն:

ԱԽՎԱՏԿԻՆ. Ուրեմն անձրե հարկավոր:

ԴԱՎԻԴՈՎ. Այս, անձրե հարկավոր ե:

ԱԽՎԱՏԿԻՆ. Մենք ել այդ ենք ասում: Թույլ տվերտերին խնդրենք մաղթանք կատարի:

ԴԱՎԻԴՈՎ. Այդ արգեն, պապի... Գնա, պապի, և այդ մասին այլևս չխոսենք:

ԱԽՎԱՏԿԻՆ. Ինչպես թե չխոսենք: Ցորենը մերն ե:

ԴԱՎԻԴՈՎ. Կոլխոզին ե:

ԱԽՎԱՏԿԻՆ. Իսկ մենք ովքեր ենք — մենք կոլխոզականներ ենք:

ԴԱՎԻԴՈՎ. Իսկ յես կոլխոզի նախագահն եմ:

ԱԽՎԱՏԿԻՆ. Մենք դա հասկանում ենք, ընկեր, գուք աստված չեք ճանաչում, մենք ձեզ չենք ել խնդրում, վոր խաչվառ վերցնեք, իսկ մեզ թույլ տվեք, մենք հավատացյալ ենք:

ԾԶՈՒԿԱՐ. Առանց խաչվառի, առանց խաչվառի:

ԴԱՎԻԴՈՎ. Թույլ չեմ տա: Ձեզ կոլխոզի ժողովն ե ուղարկել:

ԱԽՎԱՏԿԻՆ. Վաչ, Մենք ինքներս, ծերունիներս ենք վորոշել:

ԴԱՎԻԴՈՎ. Այս, աեսնմում եք, դուք քիչ եք, իսկ կոլխոզի ժողովը, մինույն ե, թույլ չի տա: Պապի, հարկավոր և գիտությամբ տնտեսություն կառավարել և վոչ թե տերտերներով:

ԱԽՎԱՏԿԻՆ. Նշանակում ե չի կարելի:

ԴԱՎԻԴՈՎ. Զի կարելի: Հարկավոր ել չի, առանց մաղթանքի ել անձրե կզա: (Եշուկարին) Իսկ քեզ համար, պապ, առանձնապես ամոթ ե:

ԾԶՈՒԿԱՐ. Ո՛, ընկեր Դավիդով: (Դավիդովը դուրս ե գնում): (Ախվատկինին) Ասում եյի ալսր ձեզ, ինձ ինչու այս գործի միջ խառնեցիք:

ԱԽՎԱՏԿԻՆ. Ինքու եյիր ուղարձենում, թե Դավիդովը քո բարեկամն ե, մենք անմիջապես գլուխ կրերենք գործը... Այս, դու, փշախոս...

Գալիս ե Նազուլնովը:

ԾԶՈՒԿԱՐ. Տնտեսությունը հարկավոր ե գիտությամբ կառավարել և վոչ թե տերտերներով: (Ուզում ե գնալ):

ՆԱԳՈՒԻԼՆՈՎ. Դուք հին մարդիկ եք: Ձեր ուղածն այն ե, վոր տերտենական տոները տոնեք, խաչ ու խաչվառի, սրբապատկերներով գաշտերը չափչիեք ու արտերը տրորեք:

ԱԽՎԱՏԿԻՆ. Հասկացի, մենք ուղում ենք, վոր թույլ տաք տերտերին մաղթանք կատարի:

ՆԱԳՈՒԻԼՆՈՎ. Հապա համարձակվեք տերտեր կանչել... Հապա համարձակվեք դաշտ գուրս գալ: Հրդեհաշեջ նասոսն առած յետեներից կզամ, այնքան ջուր կցանեմ վրաներդ, մինչև թրջված հավ գառնաք: Հասկանալի՞ յե:

ԱԽՎԱՏԿԻՆ. Ինչե՞ր ես ասում..

ՆԱԳՈՒԻԼՆՈՎ. Իսկ տերտերը լավ կանի չերեա... Թե չե ամբողջ ժողովրդի առաջ վոչխարի մկրատով մորուքը կխուզեմ... (Գալիս ե Դավիդովը) Դե, գնացեք, ծերունիներ... Գնացեք, Ծերունիները զնում են:

ԴԱՎԻԴՈՎ. Ի՞նչ եյիր խոսում ծերունիների հետ, Մակար:

ՆԱԿՈՒԻԼՆՈՎ. Յեղանակի մասին եյինք խոսում:

ԴԱՎԻԴՈՎ. Կասես ելի:

ՆԱԿՈՒԻԼՆՈՎ. Յել հասատա վորոշեցինք — մաղթանք չտնել:

ԴԱՎԻԴՈՎ. Նրանք ի՞նչ են ասում:

ՆԱԿՈՒԻԼՆՈՎ. Ասում են, հասկացան, վոր կը ոնք ուպյում ե: (Դավիդովը ծիծառում ե) Ինչ ես ծառի քոսի նման կպել ինձաւնից, Սեմյոն: Այնպիս ես կպչում, վոր քեզանից ազատում չկա: Ի՞նչ եյիր խոսում, ի՞նչ եյին խոսում: Խոսում եյին — և վերջացավ: Այդ դու յես նրանց հետ գեմոկրատիզմ զարգացնում, համոզում ես, խնդրում ես: Իսկ մեր ծերունիների հետ այդպիս չափեաք ե խոսել: Նրանք բոլորը վնասակար վոգու տեր մարդիկ են, թաղվել են թույնի մեջ, նշանակում ե նրանց հետ հարկավոր չի զուր տեղը յերկարաբարակ խոսել...

ԴԱՎԻԴՈՎ. Թեզ վերականգնեցին, բայց դու նորից շարու 55

Նակում ես առաջվա նման: Յերկու շաբաթ անկուսակցական մատցիր, դա քեզ խրատ չեղավ: Նորից թեքում ես: Հիշիր, Մակար, բարեկամաբար տառմ եմ քեզ, վերջին անգամ լինի: Դե, բավական ե, գնում եմ դարբնոց: Հարցնող վոր լինի, խկույն այստեղ կլինեմ: Մի անձրև գմբ... (Գնում ե):

Գալիս ե Մայդան ի կովը:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Վերջապես վորոշեցի՞ր կուսակցության մեջ մտնել:

ՄԱՅԻՍՆԻԿՈՎ. Դեռ վոչ:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Պավլո Լյուրիշինը, Ռւզակովը, Լաշչիլինը մտան, իսկ դժւն: Ի՞նչ ես մտածում: Ամենալավ կոլխոզականը կուսակցությունից հեռու յե կանգնած: Դրությունն այնպես ե, վորժամեծամ մոտենում ե համաշխարհային հեղափոխությունը, իսկ դու մինչեւ այժմ դեռ անկուսակցական ես:

ՄԱՅԻՍՆԻԿՈՎ. Վոչ, ընկեր Նազուլնով, իմ խիղճը թույլ չի տալիս ինձ այժմ կուսակցության մեջ մտնել: Խորհրդային իշխանության հաւաք նորից կգնամ կովելու, կոլխոզում ել կաշխատեմ խղճի մտոք, բայց կուսակցության մեջ մտնել չեմ կարող:

Գալիս ե Ծուռկարը:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Այդ ինչու:

ՄԱՅԻՍՆԻԿՈՎ. Այն պատճառով չեմ կարող, վոր յես թեպետ կոլխոզում եմ, բայց և այնպես դեռ իմ մասնավոր կյանքի մտախն եմ ցավում: Իմ յեղների մասին եմ ցավում և ափսոսում: Այնպես խնամք չի տարվում նրանց, ինչպես հարկավոր ե... Քանի վոր յես դեռ չեմ հրաժարվել իմ յեղներից ու իմ սեփականությունից, նշանակում ե իմ խիղճը թույլ չի տալիս ինձ կուսակցության մեջ մտնել:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Դու այդ իրավացի յես ասում: Մեկ վոր յեթե դու քնում ես և յերազում քո յեղներն ես տեսնում, այդ դեպքում դեռ քեզ կուսակցության մեջ մտնել չի կարելի: Կուսակցություն պիտի մտնել այնպես, վոր ներքուստ մաքուր լինես մինչեւ համաշխարհային հեղափոխություն: Մի փոքր ել նպասիր, հետո կմտնես:

ՄԱՅԻՍՆԻԿՈՎ. Ուրեմն ընկեր Դավիդովը դարբնայ գնաց: (Գնում ե):

ՇԶՈՒԿԱԲ. Բարով, Մակար: Մարդիկ կուսակցության մեջ են մտնում:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Հետո:

ՇԶՈՒԿԱԲ. Դեռ չես լծել Մի փշացրու:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Ուրիշ:

ՇԶՈՒԿԱԲ. Ուրիշ, զուցե յես ել եմ ուզում կուսակցության մեջ գրվել Յես հո իմ ամբողջ կյանքում ձի չեմ պահելու: Հո պահկած չեմ ձիերի վրա:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Ի՞նչ ես ուզում:

ՇԶՈՒԿԱԲ. Հայի լեզվով ասում եմ, ուզում եմ կուսակցության մեջ գրվեմ: Յեկել եմ իմանամ, ինչ պաշտոն եք տալու ինձ, Դու ասա ինձ ինչ գրեմ և ինչպես գրեմ:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Ուրեմն դու կարծում ես կուսակցության մեջ մտնում են պաշտոնի համար:

ՇԶՈՒԿԱԲ. Մեզանում բոլոր կուսակցականները պաշտոն ունեն:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Այսոր դու յեկամծ ես յեղել մաղթանքի համար:

ՇԶՈՒԿԱԲ. Ինչի՞ր ես ասում, Մակար, ուշքի յեկ: Միթե յես չեմ հասկանում:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Իսկ զատկին տերտերը քեզ մոտ գալի՞ս ե:

ՇԶՈՒԿԱԲ. Պարզ ե:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Բաժին թլ ես տալիս նրան:

ՇԶՈՒԿԱԲ. Բնական ե, իհարկե, մի յերկու ձու, մի կտոր ճարպ—մի կես ֆնտաչափ: Խեղճ ե:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Դու նշանակում ե մինչեւ այժմ աստծուն թլ հավատում ես:

ՇԶՈՒԿԱԲ. Հասկանալի յե: Այնքան թունդ չե, բայց բան ե, յեթե հիվանդանում եմ կամ ուրիշ գժբախտություն ե պատահում, աղոթում եմ: Բնական ե, մի փոքր միայն:

ՆԱԳՈՒԼՆՈՎ. Գրողի ծոցը կորի, փտած կաղին: Տերտերներին ձու յես նվիրում, սառույցի մեջ ծակ ես բացում, ինչ վոր պաշտոնների մասին ես յերազում, բայց ինքդ ձիերի համար քուսպ պատրաստել չես կարողանում: Դու կուսակցության ինչի՞ն ես հարկավոր: Դու, ինչ ե, ծաղրժմ ես: Քո զործն ե լեզուդ շաղ տաս, դատարկաբանություններ զուրս տաս: Դնա և մի բարկացնի ինձ—իմ ջղերը քայքայված են, առողջությունս թույլ չի տալիս քեզ հետ հանգիստ խոսել: (Գնում ե նրան):

ՇԶՈՒԿԱԲ. Այ քեզ շուն... Հարկավոր եր ճաշից հետո գալ—զլիի չընկա:

Ամպի գոռոց: Ծուռկարը խաչակիթում ե ու փախչում:

ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

14-րդ պատկերի բեմը.

Դավիդով, Նագուլթով, Ռազմյոտնով, քալոր կոլտնտափանները, մենատնտեսները, գյուղացիներ:

ԴԱՎԻԴՈՎ. Ի՞նչ ե նշանակում կոլտնտեսականների և մենատնտեսների մի մասի կողմից վերջերս տեղի ունեցած յերույթը, քաղաքացիները: Դա նշանակում ե, վոր դուք թեքվել եք կուլակային տարրերի, մեր թշնամիների կողմը: Յեզ դա ամոթալի փաստ և ձեզ համար, քաղաքացիները: Դուք անգիտակցորեն բացականչում եյիք, վորպեսզի կանայք ինձ ծեծեն, և նրանք ծեծում եյին ինձ՝ ինչով պատահեր, իսկ մի քաղաքացունի նույնիսկ լաց յեղավ, վոր յես չեմ ընկճվում: Սա յես քո մասին եմ ասում, քաղաքացունի: (Ցույց ե տալիս նաստենիային) Այդ դու եյիք բռունցներով խփում իմ մեջքին և ինքո ել բարկությունից լաց եյիք լինում և ասում «Խփում եմ նրան, իսկ նա կուռք լինի ասես, քար լինի»:

ՇԶՈՒԻԿԱՐ. Ուժի պես կծիկ դառավ գարշելին:

ԼՅՈՒԲԻՇԿԻՆ. Մի թագնվիր, կարողացել ես ծեծել, կարողացիք և ժողովի աշքին նայել:

ԴԱՎԻԴՈՎ. Այդ անկարգությունների գրգռիչները և ակտիվ մասնակիցները ձերբակալված են, բայց մյուսները, վորոնք կուլակի ծուղակն են ընկել, պիտք ե ուշքի գան և հասկանան, վոր իրենք մոլորության մեջ են ընկել: Դու յել, քաղաքացունի, մի վախեցիր, դիմքո բաց սրա, վոչ վոր քեզ ձեռք չի տա, թեպետ և դու վորս դու պատվիրեցիր ծեծեցիր ինձ: Բայց յերբ դուրս գանք ցանելու և դու վատ աշխատես, այն ժամանակ յես քեզ չեմ խնայի, այդպես ել իմացած յեզիր: Բայց կլսիմ արդեն վոչ թե մեջքիդ, այլ ավելի ցած... վորպեսզի դու վոչ նստել կարողանաս, վոչ պատկել, գրնջը քեզ տանի: (Ծիծաղ) Ընկերներ, այսոր մենք պարզեւարում ենք լավագույն հարվածայիններին—ընկերներ Շալիին, Մայդանիկովին, Լյուբիշկինին: Ընկեր Շալի (Դուրս ե գալիս դարբին Շալին): Ընկեր Շալին մինչև մարտի 15-ը նորոգել ե բոլոր տափաններն ու դութանները: Ուստի մենք զարքին իպոլիտ Շալիին իր, իսկապես հարվածային աշխատանքի համար մեծարում ենք, ի նշան վորի և նվիրում ենք լավագույն գործիքներ և մի կտոր սատին: Մտացիր, թանկագին ընկեր, մեր յեղբայրական նվերը:

ԶԱՅՆԵՐ. Արժանի յե, շատ լավ ե աշխատել: Անպետք գործիքները պիտանի յե գարձրել:

ՇԶՈՒԻԿԱՐ. Իպոլիտ, մաղարիչը քեզ վրա յե, ու գոմեց: Ազմուկ:

ՌԱԶՄՑՈՑՆՈՎ. Զայներդ: Մնաս կացեք: Գարնան հոտ եք առել: Կուլտուրական ծափ տվեք և վոչ թե գորգոռացեք: Թույլ տվեք մարդը համապատասխան խոսք ասի:

ՇԶՈՒԻԿԱՐ. Իպոլիտ, խոսքդ ասա ժողովրդի առաջ:

ՇԱԼԻ. Գործիքը մեզ, իհարկե, հարկավոր ա: Շնորհակալ ենք և կրկին անգամ շնորհակալ ենք... իսկ յես, յես ինչպես դարբնոցվ վարակված մարդ... Յես մշտապես... ինչպես վոր յես հիմա կոլխոզական եմ... ամբողջ հոգով... իսկ սատինը, իհարկե, մեր պառավին հարկավոր կզա...

Բզորք ծափահարում են: Վարպաւյր: Վարպաւյրի տռաջ Պոլովցեվը յել, Արակեակալ ենք:

ՌՈՏՐՈՎՆՈՎ. Մեկնում եք, ձերդ բարեծնություն:

ՊՈԼՈՎՃԵՎ. Մեկնում եմ, Յակով Լուկիչ, չհաջողվեց մեր գործը: Պակասել են Դոնում իսկական կազակները, շատացել են սրիկանները, դավաճաններն ու չարագործները: Հրապուրեց նրանց Ստալինն իր հոգվածով: Սրիկաններ, անիծյալներ: Նրանք չեն հասկանում, վոր այդ հոգվածը զզվելի խարերայություն ե: Ո՛, զալընի արտօածներ... Տե՛ր աստված, յի՞ր ե սպառվելու քո համբերությունը:

Պոլովցեվը յե գնում ե:

ՌՈՏՐՈՎՆՈՎ. Փառք քեզ, տեր աստված, գնաց:

Այս տեսարանի ժամանակ լսվում ե յերածշտուրյան: Բացված ե վարպաւյրը: Խեմում գտնվում են բոլոր կոլտնտեսականները: Ցերպ, յերածշտուրյան:

ԴԱՎԻԴՈՎ. Խոպանը հերկեցինք, ընկերներ,

Վ. Ա. ՐԱԳՈՒՅՐ



ՀՀ Ազգային գրադարան



NL0318702

ԳԻՒԾ 1 ՊՈԽ

11.893

ПОДНЯТАЯ ЦЕЛИНА

ПЬЕСА В 4 ДЕЙСТВИЯХ
ПО РОМАНУ М. ШОЛОХОВА



ԱՐՄԵՆԳԻԶ – ԷՐԻՎԱՆ